

Կարգավիճակի Վերաբերեալ Ներկայիս Որեւէ Փաստաթուղթ Զի Քննարկուիր. Արայիկ Յարութիւնեան

Արցախի կարգավիճակին վերաբերեալ այս փուլին որեւէ փաստաթուղթ չի քննարկուիր, կառավարութեան նիստին յայտարարած է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը: Անոր խօսքով՝ ՀՀ վարչապետին հետ կայ յատակ պայմանաւորութեան վիճակին հետ կապուած միջազգային մակարդակով որեւէ քննարկման պարագային հայկական կողմին դիրքորոշումը պէտք է համաձայնեցուած ըլլայ Արցախի իշխանութիւններուն եւ ժողովուրդի կարծիքին հետ:

Արայիկ Յարութիւնեան, ըստ նախագահի աշխատակազմին հաղորդման, ներկայացուցած է տիրող ռազմաքաղաքական իրավիճակը եւ Արցախի շուրջ արտաքին քաղաքական վերջին զարգացումները, մասնաւորապէս՝ վերջերս Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ Պրիւքսէյի մէջ (Փաշինեան-Ալիեւ-Միշէլ) եւ Մոսկուայի մէջ (Փաշինեան-Փութին) կայացած հանդիպումներու ծիրին մէջ:

Բացի այդ, ան յանձնարարած է կառավարութեան անդամներուն ցուցաբերել նախաձեռնողականութիւն՝ պետական մակարդակով ՀՀ գործընկեր գերատեսչութիւններու հետ կապերը աւելի ամրապնդելու ուղղութեամբ:

Հայոց Յեղասպանութեան Զոհերու Յիշատակի Օրուան Նշումը Հայաստանի Եւ Արցախի Մէջ

Բազմահազար մարդիկ՝ Հայաստանէն, Լեռնային Ղարաբաղէն, Սփիւռքէն, օտարերկրեայ հիւրեր երեւանի մէջ այցելելին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, յարգանքի տուրք մատուցելով 20-րդ դարու սկիզբը Յեղասպանութեան զոհ դարձած աւելի քան մէկուկէս միլիոն հայերու յիշատակին:

Հայաստանի բարձրագոյն դեկավարութիւնը առաւօտեան Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ յարգանքի տուրք մատուցեց Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:

Իրենց յարգանքի տուրքը մատուցեցին երկրին վարչապետը, նախագահը, Ազգային ժողովի նախագահը, նախարարներ եւ այլք:

Անոնք ծաղիկներ խոնարհեցին Հայոց Յեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ:

Այնուհետեւ վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկ, ծանօթացած է «Հայկական վարժարաններու հետքերով» ուսեալ ազգի վկայագրերը՝ խորագրով ցուցադրութեան ներկայացուած նիւթերուն:

Եղեռնի 107-րդ տարելիցին առիթով չղած իր ուղերձին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը նշէ, որ պատմական փաստերու, ցեղասպանութիւններու եւ ոճրագործութիւններու հերքումը, խեղաթիւրումը, ճշմարտութեան հետ ուղղութեամբ:



Զինուորական արարողութեամբ նախագահին ու վարչապետին ծաղկեպսակները կը մօտենան Ծիծեռնակաբերդի Յուշարձանին

չառերեսուելը, միջազգային հանրութեան թողտուութիւնը կը ծնի նոր դաժանութիւններ եւ յանցագործութիւններ:

Հայաստանը պիտի շարունակէ աշխուժօրէն նպաստել ցեղասպանութիւններու, մարդկութեան դէմ յանցագործութիւններու կան-

խարդիլման ուղղուած միջազգային հանրութեան ջանքերուն, ցեղային, կրօնական եւ ցեղապաշտական հողի վրայ խտրականութեան եւ անհանդուրժողականութեան դրսեւորումներու դէմ պայքարին,

Շար.ը էջ 5

Ապրիլ 24-ին ԱՄՆ Նախագահը Կրկին Օգտագործեց Յեղասպանութիւն Եզրոյթը



Միացեալ Նահանգներու նախագահ՝ Դո Պայտըն

Միացեալ Նահանգներու նախագահը հրապարակեց իր ապրիլ քսանչորսեան ուղերձը, որուն մէջ, ինչպէս նախորդ տարի, Ժո Պայտըն օգտագործած է Հայոց Յեղասպանութիւն եզրոյթը՝ քանի մը անգամ:

«1915 թուականի Ապրիլ 24-ին օսմանեան իշխանութիւնները կոստանդնուպոլսոյ մէջ ձերբակալեցին հայ մտաւորականները եւ համայնքին առաջնորդները: Այսպէս սկսաւ Հայոց Յեղասպանութիւնը՝ 20-րդ դարի վատթարագոյն զանգուածային վայրագութիւններէն մէկը: Այսօր մենք կը յիշատակենք մէկուկէս միլիոն հայերը, որոնք բնաջնջման արշաւի ընթացքին տեղահանուած են, կո-

տորուած են կամ մահուան երթի ուղարկուած են, եւ կը սպանք այդքան շատ կեանքերու կորուստը», ըստած է ուղերձին մէջ, որ հրապարակուած է Սպիտակ տան պաշտօնական կայքէջին մէջ:

«Խորհելով Հայոց Յեղասպանութեան մասին, մենք կը վերահաստատենք մեր խոստումը՝ զգօն մնալ ատելութեան քայքայիչ ազդեցութեան դէմ՝ իր բոլոր ձեւերով: Մենք յանձնառու կը մնանք աշխարհի վրայ տեւական սպիներ թողնող վայրագութիւնները բարձրաձայնելուն եւ կանգնեցնելուն: Եւ, սպալով կորուստները Մեծ Եղեռնի ընթացքին, կրկնապատ-

Շար.ը էջ 6

ՄԴՀԿ Մասնակցեցաւ Մոնթեպելլոյի Յուշարձանին Ծաղկեպսակի Արարողութեան



ՄԴՀԿ պատուիրակուծիւնը Մոնթեպելլոյի եղեռնի Յուշարձանին մօտ

Շաբաթ օր, Ապրիլ 23-ին, Հայոց ցեղասպանութեան 107-րդ տարելիցին առթիւ Մոնթեպելլոյի Եղեռնի Յուշարձանի առջեւ տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղման եւ հոգեհանգստի յատուկ արարողութիւն:

Միջոցառման ներկայ էին հոգեւոր առաջնորդներ, հայկական քաղաքական կուսակցութիւններու եւ

համայնքային տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

ՄԴՀԿ պատուիրակութիւնը կը գլխաւորէր Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Վազգէն Խոտանեանը, անոր կ'ընկերակցէին՝ Գաբրիէլ Մոլոյեանը, վարդան Քորոյլեանը, Վահէ Աջապահեանը, Փիթըր Տարաքճեանը եւ Յակոբ Աճէմեանը:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Սերժ Սարգսեանը 2018-ին Գեռացաւ Առանց Արեան՝ Ժառանգութիւն Թողնելով 2020-ին Գեղուելիք Արիւնը

ԳԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ապրիլի 23-ին լրացաւ Սերժ Սարգսեանի հրաժարականով նշանաւորուած թաւաշէյ յեղափոխութեան 4 տարին: Այդ օրը տեղի ունեցած ջանքերով երթին մասնակցած՝ պաշտօնաթողութեան 4 ամեայ ստաժով, բայց եւ ռեւանշ փափաքող երրորդ նախագահը, բնականաբար, առիթն օգտագործեց չարախնդարու ու խայթելու իր հրաժարականին հասած քաղաքացիներին:

«Կը ցանկանայի, որ այսօր էլ մեր ժողովուրդը ցնծար հրապարակում, որ այդ ժամանակահատուածում ցնծար նրա համար, որ կառուցել է աւելի լաւ երկիր, աւելի բարեկեցիկ Հայաստան, աւելի հզօր բանակ, աւելի ապահով Արցախ, բայց ցաւօք սրտի, 2018թ. ցնծացող ժողովուրդը հիմա ողբում է: Ողբում է կրկնապատկուած, ռուպատկուած Եւրոպայում, որում, ողբում է Արցախի մի մասը կորցնելու համար, ողբում է մեր անպաշտպան սահմանների համար, կազմաքանդուած բանակի համար, եւ այս առումով իհարկէ ես աւելի շատ ցաւ հիմա եմ ապրում, քան ապրել եմ 2018թ. այս օրը», -ասել է Սարգսեանը: Իհարկէ, Սերժ Սարգսեանը Սերժ Սարգսեան չէր լինի, եթէ հերթական անգամ չզբաղուէր հայ ժողովրդի հաւաքական վշտի ու կորստի սպեկուլ-

իացիայով՝ մատնացոյց անելով յատկապէս Եւրոպայի ֆիզիքական չափերի մեծացման ցաւալի իրողութիւնը: Իսկ որ ամենասոսկալին է՝ նախկին նախագահն վերոյիշեալ իրողութիւնները մատնացոյց է անում ոչ թէ սրտացաւութիւնից դրդուած, դրանց համար անկեղծօրէն ցաւ զգալով, այլ որպէս երեստուանք՝ խալխին յատուկ սառնասրտութեամբ:

Հարցին՝ չէ՞ք փոշմանել, որ 2018թ. ուժ չեք կիրառել եւ թոյլ էք տուել, որ տեղի ունենայ այն, ինչ տեղի ունեցաւ, Սարգսեանը ցինիզմի նոր «տոկոս է խփել»՝ յայտարարելով. «Իրականութեան մէջ ես չեմ փոշմանել, բայց եթէ ես կարողանայի կանխատեսել այս ամբողջ արհաւիրքը, միգուցէ 2018թ. Մարտ-Ապրիլ ամիսներին այլ կերպ կը գործէի, բայց իրօք չեմ փոշմանել, որ մեր խաբուած ժողովրդի դէմ ուժ չեմ կիրառել... Յաւաք սրտի, այն ժամանակուայ ոգեւորութիւնը այսօր վերածուել է հիասթափութեան, բայց մեր խումբը, մեր համակիրները, ողջախոս մարդիկ պահանջատէր լինելուց առաջ հայրենասէրներ են եւ ցանկացած պարագայում մենք կանգնելու ենք մեր ժողովրդի, մեր պետականութեան կողքին»:

Այժմ խօսենք փոշմանելուց. Սերժ Սարգսեանը նախ ասում է, որ «իրականութեան մէջ» չի փոշմանել հրաժարական տալու

համար, սակայն, փաստօրէն, չափորդ իսկ վայրկեանին խօսում է փոշմանածի դիրքերից՝ նշելով, որ եթէ կանխատեսէր «այս ամբողջ արհաւիրքը», 2018-ի Մարտ-Ապրիլին այլ կերպ կը գործէր: Միայն մե՞զ է թւում, թէ՞ շատերն են համակարծիք այն մտքին, որ իր ասած «այլ կերպը» 2008-ի Մարտի 1-ի սցենարի կրկնութիւնն էր, որից դասեր չքաղելու մասին սպառնալիքով Սերժ Սարգսեանն իր հրաժարականից օրեր առաջ եկել էր Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման: Համոզուած ենք, որ եթէ երրորդ նախագահն ու նա նախորդը մարսած լինէին Մարտի 1-ի արիւնը, ոչինչ ու ոչ ոք չէր բռնի մէկ անգամ արիւն հեղածի ձեռքը ռեցիդիվի դիմելիս: Եւ զուր է Մարտի 1-ի արեամբ իշխանութեան եկածը կարծում, թէ 2018-ին հրաժարական է տուել առանց արեան: «Իրականութեան մէջ» Սերժ Սարգսեանը հրաժարական է տուել՝ ժառանգութիւն թողնելով իր կանխատեսած արհաւիրքը, երկու տարի անց՝ 2020 թուականին հեղուելիք արեան մի ամբողջ ռեզերվուար, որը գոյացել էր 20 տարիների ընթացքում Արցախի հարցով իր նախորդի, իր օրօք բանակցուած փաստաթղթերով:

Սերժ Սարգսեանին թւում է, թէ կարող է յեղափոխութիւնից չորս տարի անց, հետին թիւով «գաւառական շուտորոտութիւն»

խաղարկել՝ առաջնորդուելով յայտնի ասացուածքի տրամաբանութեամբ՝ քանի դեռ գողոնը գողի ձեռքում չեն բռնել, ուրեմն գող չէ: Այսինքն՝ փոյթ չէ, որ ինքը բանակցել է հողեր յանձնելու շուրջ, բայց քանի որ ինքը դրանք չի հասցրել յանձնել, ուրեմն «հողատու» եւ «կապիտուլեանտ» չէ:

Ինչ վերաբերում է Սարգսեանի յեղափոխութիւնից հիասթափուած լինելու մասին պնդումներին, ապա դրանք հնչում են որպէս սրտի մխիթարանք: Նախկին նախագահը, ստիպած ենք արձանագրել, որ նոյնիսկ յեղափոխութիւնից ու 44-օրեայ պատերազմից յետոյ ի վիճակի չեղաւ իմաստնաւորապէս պետական այլ՝ դադարելով լինել ցինիկ եւ երեսպաշտ:

Այսինքն, վերջապէս ըմբռնել, որ 2018 թուականից սկսած երկրում «բան է փոխուել», ժողովուրդը, որպէս իշխանութիւն կրող իրաւասութիւն, 2018-ից սկսած վերանուածել է ըստ իր կամքի ու խղճի «բան որոշողի» կարգավիճակը: Քաղաքացու «որոշած բանի» մասին են վկայում մօտ մէկ տարի առաջ տեղի ունեցած Աժարտահերթ ընտրութիւնների արդիւնքները, որոնք, վստահօրէն, յեղափոխութիւնից հիասթափուած կամ խաբուած չլինելու խօսուն ապացոյցն են: Պաշտօնաթող նախագահի ասած՝ յեղափոխութիւնից հիասթափուածուածներ իրօք կան, որոնց թիւը գրեթէ համարժէք է նրա քաւորութեամբ գործող Աժ դաշինքի մանդատների թուին: «Civic.am»

Օսկանեանը Միալ Է՝ «Ընդհանուր Պետութեան» Առաջարկը Զեր Ենթադրում ԼՂ Կարգավիճակ Ատրպէյճանի Կազմից Դուրս

ՆԱԼԷ ՄԱՆԱՍԵԱՆ

Ապրիլի 18-ին ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանեանը հրապարակել է իր հերթական յօդուածը՝ Արցախեան հակամարտութեան ներկայ փուլի վերաբերեալ:

Օսկանեանը, նկարագրելով 1998 թուականի Յունուարի 8-ին առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հրաւիրած Ազգային Անվտանգութեան Խորհրդի յայտնի նիստից մի դրուագ, անդրադարձել է ԵԱՀԿ Մինսկի խմբի «ընդհանուր պետութեան», Քի վեպի եւ Մատրիտեան առաջարկներին, որոնք երեքն էլ, ըստ նախկին արտգործնախարարի, ենթադրում էին Արցախի կարգավիճակի Ատրպէյճանի կազմից դուրս:

«...Տէր-Պետրոսեանը ինձ դրեց բաւական բարդ վիճակի մէջ եւ իմ ուղղութեամբ մեկնելով ձեռքը՝ ասաց. «Թող Վարդանն ասի՝ արդե՞օք հնարաւոր է երբեքից ստանալ մի փաստաթուղթ, որտեղ հղում կատարուի Ղարաբաղի կարգավիճակին՝ առանց ամրագրելու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը»... Եւ ես ասացի այն, ինչին հաւատում էի. «Պարոն նախագահ, կարծում եմ, որ հնարաւոր է»: [...] Յաջորդ տարիներին Մինսկի խումբը սեղանին դրեց երեք առաջարկ (ընդհանուր պետութեան, Քի վեպի եւ Մատրիտեան առաջարկները), որտեղ հղում կար Ղարաբաղի կարգավիճակին, եւ երեք դէպքում էլ՝ Ատրպէյճանի կազմից դուրս», - գրել է Օսկանեանը իր յօդուածում:

«Փաստերի Ստուգման Հարթակն» ռուսումնասիրեց Օսկանեանի՝ այս ու յօդուածում տեղ գտած մի քանի այլ պնդումները:

Օսկանեանի համար «ընդհանուր պետութեան» տարբերակը ժամանակին ընդունելի չէր: Մինսկի Խմբի համանախագահները Հայաստանին ու Ատրպէյճանին «ընդհանուր պետութեան» առաջարկը ներկայացրել են 1998 թուականի Նոյեմբերին: Համաձայն այդ փաստաթղթի՝ կողմերը կնքում են համաձայնագիր, որով ԼՂ-ն հանրապետութեան ձեւի պետական եւ տարածքային կազմաւորման կարգավիճակ է ստանում «Ատրպէյճանի միջազգայնօրէն ճանաչուած սահմաններում»:

Փաստաթղթով սահմանուած էր, որ ԼՂ-ն մասնակցում է Ատրպէյճանի արտաքին քաղաքականութեան իրազդրմանը միայն այն հարցերում, որոնք «չօչափում են իր շահերը», եւ որ ամենակարեւորն է՝ այդ հարցերի վերաբերեալ որոշումները չեն կարող ընդունուել «առանց երկու կողմերի համաձայնութեան»:

Արցախի բնակիչները, համաձայն ընդհանուր պետութեան առաջարկի, որպէս անձը հաստատող վկայական կ'ունենային Ատրպէյճանի անձնագիր՝ «Լեւոնային Ղարաբաղ» յատուկ նշումով: ԼՂ բնակչութիւնն իրաւունք կ'ունենար նաեւ ընտրելու իր ներկայացուցիչներին Ատրպէյճանի խորհրդարանում եւ մասնակցելու Ատրպէյճանի նախագահի ընտրութիւններին:

Ինքը՝ Օսկանեանը, 2012 թուականին Mediamax գործակալութիւնում հրապարակուած «Ընդհանուր պետութեան» գաղափարի ծնունդը՝ վերտառութեամբ յօդուածում խոստովանում է, որ այդ փաստաթղթի «մի քանի դրոյթներ Ղարաբաղին լուրջ կախուածութեան մէջ էին դնում Ատրպէյճանից», - գրել էր Օսկանեանը:

Այսպիսով, Օսկանեանի այն պնդումը, թէ «ընդհանուր պետութեան» տարբերակը ենթադրում էր Արցախի ինքնորոշում Ատրպէյճանի կազմից դուրս, չի համապատասխանում իրականութեանը: «ԼՈՒՐԵՐՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

Յարտարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնորհոն արտայայտուող բոլոր միտքերը

Հարտարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնորհոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massispost.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁՎԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶՊԱՂԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ԱԱԾ-ն Բացայայտած է Սպայի Կողմէ Պետական Դաւաճանութեան Արարք

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) կը յայտնէ գինուորի կողմէ պետական դաւաճանութիւն կատարելու հերթական դէպքը բացայայտելու մասին:

Ըստ ԱԱԾ-ի, գինուորը՝ կոչուածով սպայ, հաւաքագրուած է օտարերկրեայ յատուկ ծառայութիւններու կողմէ եւ ընդհանուր 1,400 տոլար վարձատրութեան դիմաց օտարերկրեայ յատուկ ծառայութիւններուն յանձնած է մասնաւորապէս արտերկրի մէջ ռազմական ակադեմիան աւարտած համադասարանցիներու, ծառայութեան N գործառնի հրամանատարական կազմի, հրթիռահրետանային վարչութեան ղեկավար անձնակազմի, «էքսիօ-նազմական» ցուցահանդէսին մեկնած սպայական կազմի կենտրոնիչ տուեալները, բՆԾային հեռախօսահամարները՝ տրամադրելով նաեւ իր ծառայութեան N գործառնի N բաժնի գինուորներու հաստիքացուցակը, ինչպէս նաեւ նոյն գործառնի մէջ առկայ հրթիռային համակարգի թուաքանակի, 2020 թուականի Սեպտեմբեր 27-ին սանձագերծուած 44-օրեայ պատերազմի ընթացքին գրահասարքերու կորուստի, հրթիռահրետանային համազարկերու գտնուելու վայրերու, գորավարժութեան վայրերու, կիրառուած գրահասարքի, գորավարժութեան մասնակից ղեկավար սպայական կազմին վերաբերեալ տուեալներ:

Բացի այդ, ըստ Ծառայութեան, նոյն գինուորը, 44-օրեայ պատերազմին ժամանակ, զբաղեցնելով հրթիռային N համակարգի մարտկոցի հրամանատարի տեղակալի պաշտօնը, մարտական առաջադրանքով արդիւնաւէտ եւ նպատակային խոցումներ չէ կատարած, տեւական ժամանակ միջոցներու չէ ձեռնարկած հրթիռ արձակող գրահարկներ:

Առանց Հանրային Քննարկման Արցախի Հարցով Փաստաթուղթ Պիտի Չստորագրուի. Նիկոլ Փաշինեան

«Ինչ վերաբերում է Արցախը յանձնելուն, հազար անգամ ներդրութիւն խնդրելով՝ ստիպուած եմ արձանագրել, որ Արցախն իր չէ, առարկայ չէ, որ յանձնես կամ չյանձնես», կառավարութեան նիստին ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ուզում եմ տեղեակ լինէք, որ Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորմանն առնչուող իմ մտկոլմեան բանակցութիւնների բովանդակութեան մասին աշխատանքային կարգով տեղեակ եմ պահել ԼՂ նախագահին», չաւելցց ան:

Փաշինեան նշեց, որ այս գործելաոճը նոր չէ, այսպէս վարուած է միշտ՝ Ռուսաստանի, Եւրոպայի, Հայաստանի մէջ տեղի ունեցած բանակցութիւններէն, քննարկումներէն յետոյ, եւ Արցախի նախագահն ալ, իր հերթին, այդ բանակցութիւններուն արդիւնքները ներկայացուցած է Արցախի քաղաքական վերնախաւին:

«Այս գործելակերպը շարունակուելու է միշտ, ընդ որում, բանակցութիւնների մէջն փուլից յետոյ մանրամասն տեղեկութիւնները կիսում եմ հայաստանեան իշխանական, քաղաքական ամենատարբեր շրջանակներին հետ, մշտապէս պատրաստակամութիւն եմ ցուցաբերել այդ բովանդակութիւնը



հասարքը քողարկելու ուղղութեամբ, որուն հետեւանքով հակառակորդին կողմէ թիրախաւորուած եւ անօդաչու թռչող սարքի միջոցով խոցուած է այն՝ յանգեցնելով գրահասարքի անվերադարձ կորուստի:

ԱԱԾ-ն կը նշէ, որ յիշեալ գինուորը պատերազմի աւարտէն յետոյ շարունակած է համագործակցութիւնը օտարերկրեայ յատուկ ծառայութիւններու ներկայացուցիչներուն հետ, որու ընթացքին վարձատրութեան դիմաց տրամադրած է նաեւ ներմուծուած սպառազինութեան եւ գրահասարքի քանակի ու տեսակի վերաբերեալ տուեալներ, ինչպէս նաեւ ունենալով գաղտնիութեան թոյլտուութեան համապատասխան աստիճան, 8 հազար տոլար վարձատրութեան դիմաց, ան փոխանցելու նպատակով հաւաքած է N գործառնի գաղտնի դրոշմագրով մարտական քարտէզներ, սակայն բացայայտուած է եւ գործունէութիւնը աւարտին չէ հասցուցած:

Ձինուորը ձերբակալուած է եւ տուած է խոստովանական ցուցմունքներ, ըսուած է հաղորդագրութեան մէջ:

կիսել նաեւ խորհրդարանական ընդդիմութեան հետ, բայց վերջիններս մշտապէս հրաժարուած են նմանօրինակ քննարկումներից՝ թեւեւ հասկանալի պատճառներով, որպէսզի այլազան դաւադրութեան տեսութիւնների մասին առասպելներ ստեղծեն եւ այդ առասպելները դնեն իրենց գործունէութեան հիմքում», ըսաւ ան:

Փաշինեան յաւելցց. «Մասնաւորապէս 2020 թուականի Նոյեմբերի 9-ից յետոյ գործնականում իմ ամէն օտարերկրեայ այցից առաջ բոլոր հնարաւոր աղբիւրներով լուրեր են տարածուել, թէ պատրաստուած եմ Լեւոնային Ղարաբաղեան կարգաւորման վերաբերեալ ինչոր փաստաթուղթ ստորագրել, որով Արցախը պիտի յանձնուի Ատրպէյջանին: Պատասխանատու կերպով ասում եմ, որ այս ընթացքում եւ այս պահին չի եղել ու չկայ Լեւոնային Ղարաբաղեան կարգաւորման ոչ մի նախագիծ կամ սեւագիր, որը սեղանի վրայ լինի կամ շրջանառութեան մէջ գրուած լինի: Ինչ վերաբերում է Արցախը յանձնելուն, հազար անգամ, ներդրութիւն խնդրելով՝ ստիպուած եմ արձանագրել, որ Արցախն իր չէ, առարկայ չէ, որ յանձնես կամ չյանձնես, Արցախն առաջին հերթին այնտեղ ապրող մարդն է: Եթէ

«Դիմադրութիւն» Շարժումին Կոչերը Լայն Արձագանգ Չեն Գտներ



«Դիմադրութիւն» շարժումի երթը Երեւանի Սեջ, որուն մասնակցած է շուրջ 1200 հոգի

Խորհրդարանական երկու ընդդիմադիր դաշինքներու նախաձեռնած փողոցային շարժումները իրենց ակնկալած արդիւնքը չեն տար: Հանրային լայն շրջանակները անարձագանգ կը թողնեն «Դիմադրութիւն» շարժումին «Ջարթ-նիր լաօ» կոչերը: Կարելի չ'ըլլար գորաշարժի ենթարկել 2-3 հազարէն աւելի ցուցարար: Ի տարբերութիւն «Հայրենիքի Փրկութեան Շարժման» առաջին փուլին, որ մեկնարկած էր 2020 թուականի Նոյեմբեր 10-ին, այս անգամ ընդդիմութեան ներկայացուցիչները քիչ մը փոխած են մարտավարութիւնը, բեմահարթակը տրամադրած են աւելի երիտասարդ ներկայացուցիչներու, իսկ իրական առաջնորդները կը նախընտրեն մասնակցիլ շարժումներուն ցուցարարներու շարքերուն մէջ:

Կայ եւս մէկ տարբերութիւն, այս անգամ գրեթէ նոյնութեամբ կը կրկնեն 2018 թուականի չեղափոխութեան ժամանակ կիրառուած գործիքները՝ քայլերթեր, իրազեկման շարժումներ, արագաչափերու փակում եւ այլն: Ընդդիմութեան ներկայացուցիչները կարծես միամտօրէն հաւատացած են, որ փողոցային շարժումներու անյաջողութեան պատճառները մեթոտներուն եւ մօտեցումներուն մէջ են: Այնինչ խնդիրը յառաջ քաշուած

օրակարգն է, աւելի ճիշդ՝ իրական օրակարգը թաքցնելը: Ընդդիմութիւնը կը գուժէ, որ Արցախի հարցով կ'ընթանան կամ կը սպասուին կործանարար գործընթացներ եւ կոչ կ'ընեն հասարակութեան՝ դուրս գալու փողոց եւ կանխելու այդ ամէնը, իսկ այդ ընելու համար պէտք է իրականացնել իշխանափոխութիւն: Եթէ աւելի հասկնալի ներկայացնենք ընդդիմութեան օրակարգը՝ նպատակը Արցախի եւ Հայաստանի փրկութիւնն է, իսկ անոր հասնելու միջոցը՝ իշխանափոխութիւնը:

Արցախի կարգավիճակին շուրջ վատատեսական սենարներ հանրութեան հրամցնելը չունի որեւէ հիմք: Արցախի նախագահը յայտնած է, որ Արցախի կարգավիճակին վերաբերեալ այս փուլին որեւէ փաստաթուղթ չի քննարկուիր, եւ Հայաստանի վարչապետին հետ կայ յստակ պայմանաւորուածութիւն, համաձայն որուն՝ Արցախի հետագայ կարգավիճակին հետ կապուած միջազգային մակարդակով որեւէ քննարկման պարագային, հայկական կողմին դիրքորոշումը պէտք է համաձայնեցուած ըլլայ Արցախի Հանրապետութեան իշխանութիւններուն եւ ժողովուրդի կարծիքին հետ: Նոյնաբովանդակ յայտարարութիւններ հնչած են նաեւ Հայաստանի իշխանութիւններէն:

մենք Արցախը յանձնող լինէինք, 44-օրեայ պատերազմից յետոյ տասնեակ միլիոնաւոր դրամներ չէինք ծախսի, որ ապահովենք արցախցիների իրենց յանձնողը, ընդհակառակը, պատերազմից յետոյ պարզապէս ոչինչ էր ձեռնարկի, եւ Արցախի յանձնումն ըստ էութեան իրականութիւն դարձած կը լինէր: Մենք, ընդհակառակը, աննախադէպ ծաւալի ներդրումներ ենք իրականացնում Արցախում, որովհետեւ Արցախը պահել նշանակում է արցախցուն պահել Արցախում: Հայաստանը պահել նշանակում է հայաստանցուն պահել Հայաստանում եւ մի բան էլ հեռացածներին վերադարձնել: Իսկ սա առանց խաղաղութեան հնարաւոր չէ: Էլ չեմ ասում՝ պարզապէս բացառում եմ, որ գոյութիւն ունենայ ստորագրմանը շատ թէ քիչ մօտիկ մի փաստաթուղթ, որն ստորագրուի առանց լայն հանրային քննարկ-

ման, այդ թւում՝ Արցախի հանրութեան բոլոր շերտերի հետ: Սա երկաթեայ երաշխիք է, որ Արցախի ճակատագիրը չի կարող որոշուել ժողովրդի թիկունքում», ըսաւ ան:

Ըստ Փաշինեանի՝ այս առումով յոռետեսները կը բերեն 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան օրինակը, որ ստորագրուեցաւ առանց լայն հանրային քննարկման: «Սա տարօրինակ համեմատութիւն է, որովհետեւ պատերազմի պայմաններում ժամերի, երբեմն րոպէների ընթացքում պիտի որոշուի կայացուէր՝ հազարաւոր արցախցիների, 25 հազար գինուորի կեանքը եւ Արցախը հայաթափուից փրկելու հարցը: Համեմատութիւնները պարզապէս տեղին չեն: Բայց, միւս կողմից, մեր ողջ քաղաքականութիւնն ու քայլերը հէնց դրան են ուղղուած, որ ստիպուած չլինենք նմանատիպ պայմաններում որոշում կայացնել», ըսաւ ան:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Շնորհաւորած է Մաքրոնը, Զայն Զրաւիրած է Զայաստան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական նամակ չղած է էմանուէլ Մաքրոնին՝ Ֆրանսայի նախագահական ընտրութիւններուն յաղթանակի եւ նախագահի պաշտօնին վերընտրուելու առիթով:

«Ֆրանսացի ժողովրդի վստահութեան քուէն նախագահի պաշտօնում նախորդ տարիների Ձեր կատարած ծաւալուն աշխատանքի ամենաբարձր գնահատականն է, ինչը վերահաստատում է Ձեր ընտրած քաղաքական ուղեգծի յաջողութիւնը», իր ուղերձին մէջ ըսած է Հայաստանի վարչապետը՝ շեշտելով. «Հաւատարմութեամբ շեշտելով. «Հաւատարմութեամբ մաղթելով ամենայն յաջողութիւն»:

Փաշինեանը համոզմունք յայտնած է, որ Մաքրոնի վերընտրութիւնը գալիք հնգամեակի ընթացքին նոր լիցք պիտի հաղորդէ Հայ-Ֆրանսական յարաբերութիւններուն եւ հնարաւորութիւն պիտի տայ յաջողութեամբ շարունակելու համաձայնեցուած համատեղ ծրագրերը, այդ շարքին՝ երկկողմ տնտեսական յարաբերութիւններու աշխուժացման ուղղուած ջանքերը:

Խուժացման ուղղուած ջանքերը:

«Հայաստանը բարձր է գնահատում ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահի կարգավիճակում Ֆրանսայի դերակատարումը մեր տարածաշրջանում երկարաժամկէտ խաղաղութիւն հաստատելու հարցում եւ յոյս յայտնում, որ այն շարունակական կը լինի նաեւ Ձեր նախագահութեան երկրորդ հնգամեակի ընթացքում», ըսած է Հայաստանի վարչապետը՝ «Երեւանում հիւրընկալելու սպասումով» կրկին շնորհաւորելով Մաքրոնը «վստահ յաղթանակի կապակցութեամբ՝ մաղթելով ամենայն յաջողութիւն»:

Յիշեցնենք, որ Ֆրանսայի մէջ Կիրակի օր կայացած նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլի նախնական տուեալներով՝ Մաքրոնը վերընտրուած է Ֆրանսայի նախագահ: Ան շահած է քուէներուն 57.6 տոկոսը, անոր մրցակից ազգայնական Մարին Լը ֆենը՝ քուէներուն՝ 42.4 տոկոսը: Մաքրոնը նախագահի պաշտօնը կը զբաղեցնէ 2017 թուականէն: Առաջին ընտրութիւններուն ան կրկին երկրորդ փուլին յաղթած էր Լը ֆենին:

Էրտողան «Դաւաճանութիւն» Կը Նկատ Կարօ Փայլանի Ներկայացուցած Ցեղասպանութեան Գնահատման Օրինագիծը

Թուրքիոյ նախագահը խստօրէն դատապարտած է խորհրդարանի ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը՝ Հայոց Ցեղասպանութեան Գնահատման վերաբերեալ օրինագիծ ներկայացնելու համար:

Ռեճեպ Թայիպ Էրտողանը այդ քայլը անարգանքէն աւելի՝ բացայայտ դաւաճանութիւն համարած է: Ան յոյս յայտնած է, որ «խորհրդարանի իրաւական եւ բարոյական կանոնները ոտնահարած անձին նկատմամբ համապատասխան գործողութիւններ կը ձեռնարկուին»:

107-րդ տարեկիցին ընդառաջ Փայլանի կողմէ մեծ լիւսի քննարկման ներկայացուած օրինագիծը կ'ենթադրէր ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը, սահմանել պատասխանատուները, հանրային վայրերէն հեռացնել Ցեղասպանութեան մեղաւորներուն անունները, փոխարէնը այդ վայրերը անուանակոչել Ցեղասպանութեան ընդդիմացած քաղաքական ծառայողներուն անուններով, տուժած-



Թրքական խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան

ներուն եւ անոնց ընտանիքներու անդամներուն թուրքիոյ քաղաքացիութիւն շնորհել:

խորհրդարանի նախագահ Մուսթաֆա Շենթոփը այդ օրինագիծը ետ ուղարկած էր՝ պատճառաբանելով, թէ այն կը հակասէ մեծ լիւսի կանոնադրութեան:

Առաջին Եռամսեակին Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Աճած է 9.6%

Այս տարուայ առաջին եռամսեակին տնտեսական աշխուժութեան ցուցանիշը աճած է 9.6 տոկոսով: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ Վիճակագրական կոմիտէն՝ հրատարակելով շտապ հաւաքագրուած տուեալները: Այս տարուայ Մարտին, նախորդ տարուայ Մարտին համեմատ, աճը կազմած է 6.7 տոկոս:

Յունուար-Մարտին, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ, արդիւնաբերական արտադրանքի ծաւալը աճած է 3.1 տոկոսով, շինարարութեան

ծաւալը՝ 6.2 տոկոսով, առեւտրի շրջանառութիւնը՝ 7.6 տոկոսով, ծառայութիւններու ծաւալը՝ 22.2 տոկոսով: Սպառողական գնաճը կազմած է 7.8 տոկոս: Գիւղատնտեսութեան ոլորտին մէջ արձանագրուած է 5.4 տոկոս անկում:

Առաջին եռամսեակին, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ, արտաքին առեւտրաշրջանառութիւնը աճած է 38.5 տոկոսով, այդ շարքին՝ արտահանումը՝ 26.9, իսկ ներմուծումը՝ 45.6 տոկոսով:

«Նոր Էջ Կը Բանանք Զայ-Յնդկական Տնտեսական Զամագործակցութեան Պատմութեան Մէջ». Սիրգոյեան



Նախարար Արարատ Սիրգոյեան ելոյթ կ'ունենայ հայ-ինդկական գործարար համաժողովի ընթացքին

«Այսօր մենք իրապէս նոր էջ ենք բացում հայ-ինդկական տնտեսական համագործակցութեան պատմութեան մէջ, եւ թոյլ տուէք ասել՝ վերականգնում ենք մեր ժողովուրդների միջեւ առեւտրի, զարգացման եւ բարգաւաճման հիանալի աւանդոյթները», Նիւ Տելհիի մէջ՝ հայ-ինդկական գործարար համաժողովի բացման ընթացքին ըսած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Սիրգոյեանը:

Տարիներու ընթացքին Հնդկաստանը դարձած է Հայաստանի կարեւոր տնտեսական գործընկերը, նշած է Սիրգոյեան՝ շեշտելով, որ կայ ջոզտագործուած հսկայական ներուժ, որու իրացման համար պէտք է աշխատիլ միասին:

Ընդգծելով, որ Հնդկաստանը անուանական ՀՆԱ-ով աշխարհի վեցերորդ երկիրն է եւ մեծ տէրութիւններուն մէջ ամենաարագ զարգացող տնտեսութիւնը, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը նկատած

է, որ հայ գործարարներուն, արհեստագէտներուն եւ սկսնակ ձեռներէցներուն համար կրնայ դառնալ անսահմանափակ հնարաւորութիւններու երկիր:

«Հայաստանն, իր հերթին, գտնուելով Եւրոպայի եւ Ասիայի խաչմերուկում, շատ բան ունի առաջարկելու Հնդկաստանին: Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեանը՝ 180 միլիոն բնակչութեամբ եւ շուրջ 200 թրիլիոն տոլար ՀՆԱ-ով, Եւրոմիութեան հետ Համապարփակ եւ Ընդլայնուած Գործընկերութեան Համաձայնագիրը, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի, Ճափոնի, Գանատայի, Նորվեկիայի եւ Զուիցերիայի հետ «GSP» առեւտրային ռեժիմը շոշափելի առաւելութիւններ են Հայաստանի ներդրումային գրաւչութեան եւ օտարերկրեայ գործընկերների հետ արդիւնաւէտ համագործակցութեան համար», ըսած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

Նոր Աթոմակայան Կառուցելու Զայ-Ռուսական Աշխատանքային Խումբը Սկսած է Գործունէութիւնը

Հայաստանը գործուն քայլերու կը ձեռնարկէ նոր աթոմակայանի կառուցման ուղղութեամբ, եւ այդ նպատակով Երեւանն ու Մոսկուան համատեղ աշխատանքային խումբ ստեղծած են, յայտնեց տարած քայլին կառավարման փոխնախարար Յակոբ Վարդանեանը, որ պատասխանատու է ուժանիւթ հարցերուն համար:

Պաշտօնեան ընդգծեց, որ խումբը արդէն իսկ սկսած է աշխատանքները. «Ինչ վերաբերում է նոր աթոմային էներգիայի լոքին, մենք ոչ միայն հակուած ենք, մենք երկկողմանի ստեղծել ենք աշխատանքային խումբ, աշխատանքային խումբն աշխատում է, արդէն առաջին համատեղ նիստն ունեցել ենք: Այս պահին տեխնիկա-տնտեսական հիմնաւորման վրայ ենք աշխատում, եւ այո՛, մենք կառուցելու ենք նոր էներգիայի»:

Հայաստանի վարչապետի օրերս Ռուսաստան կատարած պաշտօնական այցի ժամանակ Փաշինեանն ու Փոլթինը համատեղ յայտարարութիւն ընդունեցին:

Անոր մէջ պատրաստակամութիւն յայտնած էին ընդլայնելու համագործակցութիւնը աթոմային ուժանիւթի բնագաւառին մէջ, նաեւ նոր պլոքներու կառուցման մշակման շուրջ:

Առաջին անգամը չէ, որ Հայաստանի ու Ռուսաստանի ղեկավարները կը քննարկեն հայկական նոր աթոմակայանի հարցը: Նախորդ տարուայ Ապրիլին եւս՝ Փոլթինի հետ հանդիպումէն առաջ, Փաշինեան յայտնած էր, որ մտադիր է քննարկելու Հայաստանի մէջ նոր աթոմակայանի կառուցման հնարաւորութիւնը, թէեւ փակ հանդիպման շրջագծ յայտարարութեան մէջ թեմային անդրադարձ չեղաւ:

Տարած քայլին կառավարման փոխնախարարը ընդգծեց, որ Հայաստանի բոլոր կառավարութիւնները որոշումներ ունեցած են աթոմային երկիր մնալու մասին, մինչդեռ Մեծամորի աթոմակայանը հնարաւոր պիտի չըլլայ շահագործել 2036-էն յետոյ:

Նոր աթոմակայանը կրնայ աժել 5-13 միլիարդ տոլար:

Ցեղասպանութեան Ձոռերու Յիշատակում

Շարունակուած էջ 1-էն

ընդգծած է վարչապետ Փաշինեան՝ յաւելելով, որ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման օրակարգը պիտի ծառայէ Հայաստանի անվտանգութեան երաշխիքներու համակարգի ամրապնդման:

«Այս օրակարգը կառավարութիւնը ծառայեցնելու է ոչ թէ տարածաշրջանային լարուածութեան աճին, այլ ընդհակառակը՝ տարածաշրջանի լիցքաթափման նպատակին», կ'ըսուի անոր ուղերձին մէջ:

զարգացման դարաշրջան բացելու օրակարգին, որովհետեւ սեփական անվտանգութեան ապահովման ամենարդիւնաւէտ գործիքը կայացած պետականութիւնն է եւ խաղաղութիւնը: Ու մենք պիտի գնանք այս ճանապարհով», նշած է Հայաստանի ղեկավարը:

Ապա ան յաւելած է, որ նաեւ այս է պատճառը, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման միտումնաւոր քննարկումներ կը վարեն՝ յոյս յայտնելով, որ Թրքական կողմին ձգտումները անկեղծ են, եւ



ՀՄՍ-ի սկաուտները կ'այցելեն Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

«Մեծ Եղեռնը հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական էջն է: Եւ այն մեզ համար ոչ միայն մեր անմեղ նահատակները չիշատակը խնկարկելու, նրանց առաջ գլուխ խոնարհելու, այլեւ մեր պատմութեան անցեալի, ներկայի եւ ապագայի մասին մտածելու առիթ է: Այս մեզ համար առիթ է արձանագրելու, որ հայ ժողովուրդը սեփական ճակատագրի տնօրինման աւելի ու աւելի մեծ հնարաւորութիւններ ու լծակներ պիտի ունենայ, պիտի կարողանայ սեփական ճակատագիրն ուրիշներէ որոշումներ տիրոջ թից սեփական որոշումներ տիրոջ թ տեղափոխել:

կը կարենան այս ուղղութեամբ շարժիլ յառաջ:

«Միաժամանակ, այսօրուայ մեր ինդիւրն է՝ համայն հայութեան ներուժի իրացմամբ կառուցել արժանապատիւ եւ կայացած ժողովրդավարական պետութիւն», նկատած է ան:

Եթէ Հայոց Ցեղասպանութիւնը ժամանակին դատապարտուէր, ապա կը կանխարգիլուէին հետագայ ցեղասպանութիւնները, համոզմունք կը չայտնէ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրեանը:

«Հէնց այդ պատճառով է Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային ասպարէզում հետեւողական պայքար մղում ցեղասպան



Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Էջմիածնի միաբաններուն հետ բարեխօսական կարգ կը կատարէ եղեռնի Յուշարձանին մօտ

Նման իրավիճակի ամենագործուն արտայայտումը անկախ պետականութիւնն է, իր բոլոր հիմնարկների առաւելագոյն կայացումն է, որոշումներ կայացման ընդունակութիւններով ու մեխանիզմներով: Այս գիտակցումն է մեզ յանգեցրել մեր ժողովրդի ու տարածաշրջանի համար խաղաղ

նութեան յանցագործութեան դատապարտման եւ կանխարգելման ուղղութեամբ: Մենք գիտակցում ենք, որ մեր նահատակուած հայրենակիցների չիշատակին յարգանքի տուրք մատուցելու լաւագոյն ձեւը հզօր եւ ժողովրդավար Հայաստանի կայացումն է, մեր ժողովրդի բարօր կեանքի, մեր երկրի սահ-

Ուրուկուէյի Արտաքին Գործերու Նախարարը Դատապարտած է Թուրք Պաշտօնակիցին Արարքը

Ուրուկուէյի արտաքին գործերու նախարար Ֆրանսիսքօ Պուլիթիօն, ելոյթ ունենալով Հայոց Ցեղասպանութեան 107-րդ տարելիցին նուիրուած միջոցառման ընթացքին, դատապարտեց եւ մերժեց իր Թուրք գործընկեր Մեւլութ Չաւուշօղլուի՝ հայերուն ուղղած «Գորշ Գայլերու» նշանը:

Մոնթեվիտէոյի «Արմենիա» հրատարակին մէջ կայացած ձեռնարկի ժամանակ իր ելոյթին մէջ, նախարարը վերահաստատեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը Ուրուկուէյի կողմէ:

Արտաքին գործերու նախարարը ըսաւ, որ իր երկիրը չիշոյուութեան եւ սկզբունքներու երկիր է, որ կը պաշտպանէ խաղաղութիւնը, ուստի դատապարտելի ու մերժելի են բոլոր արարքները, որոնք կը ստեղծեն ֆիզիքական կամ բարոյական բռնութիւն ու ստեղծութիւն:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուի Ուրուկուէյ այցելութեան ընթացքին տեղի ունեցած է սկանտալ: Մոնթեվիտէոյի Թրքական դեսպանութեան առջեւ հաւաքուած հայերու բողոքներ



Նախարար Ֆրանսիսքօ Պուլիթիօ ելոյթ կ'ունենայ «Արմենիա» հրատարակին վրայ

րուն Չաւուշօղլուն պատասխանած է «գորշ քայլերու» նշանով:

Ուրուկուէյի արտաքին գործոց նախարարը Թուրքիոյ դեսպանին կանչած է նախարարութիւն՝ այդ նշանի կապակցութեամբ բացատրութիւններ տալու համար:

մանների ամրութեան ու անվտանգութեան ապահովումն է, Հայաստանի միջազգային հեղինակութեան ամրապնդումն է», ըսուած է նախագահին ապրիլ քսանչորսեան ուղերձին մէջ:

«Յաւօք, Ցեղասպանութեան ճանաչումն ու սեփական պատմութեան ամօթալի էջերի տարատեսակ խմբագրումները շարունակում են մնալ ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականութեան հիմքում: Մէկ անգամ չէ, որ համոզուել ենք՝ յանցագործութեան ժխտումը նոր յանցագործութեան երաշխիքն է», նշած է Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը իր ուղերձին մէջ:

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը, իր հերթին, շեշտած է. «Մեծ Եղեռնից աւելի քան հարիւր տարի յետոյ էլ մենք կրկին կանգնած ենք լրջագոյն մարտահրաւէրների առջեւ, կրկին ստիպուած ենք պայքարել յանուն ազգային ու համամարդկային արժէքների, մարդու հիմնարար իրաւունքների ու ազատութիւնների պաշտպանութեան, յանուն սեփական հողում ազատ ու անկախ ապրելու մեր բնական իրաւունքի լիարժէք իրացման»:

Ան իր ուղերձին մէջ նշած է, որ ամբողջ աշխարհի աչքին առջեւ այսօր Ատրպէյճանը կը շարունակէ բացայայտ կերպով Արցախի ժողովուրդին հանդէպ իրականացնել «հայտնեաց ու ռազմատենչ քաղաքականութիւն՝ կոպտօրէն խախտելով ու ոտնահարելով համընդհանուր ընդունուած ու ճանաչուած միջազգային իրաւունքի բոլոր կանոններն ու սկզբունքները»:

Յարութիւնեանը ընդգծած է, որ աշխարհի շառաւղղէմ մարդկութիւնը պէտք է կանգնի Արցախի խաղաղ բնակչութեան կողքին, որ հաստատակամ է իր որոշման մէջ՝ «ապրել եւ արարել իր նախնիների հողում»:

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը Ապրիլ 24-ին հանրապետու-

թեան երրորդ նախագահ Բախօ Սահակեանի, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի ու երկրի բարձրաստիճան ղեկավարութեան հետ այցելած է Ստեփանակերտի յուշահամալիր եւ ծաղիկներ դրած՝ Մեծ Եղեռնի անմեղ զոհերուն յիշատակը յաւերժացնող յուշակոթողին: Այս մասին տեղեկացուցին Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեանէն:

Ապրիլ 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններուն ուղեկցութեամբ այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ ողբկոչելու Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներուն յիշատակը:

Ծաղկեպսակի գետեղումէն յետոյ յուշահամալիրին մէջ՝ անմար կրակին առջեւ, Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներու բարեխօսական կարգ:

Օրուան առիթով Ծիծեռնակաբերդի յուշահամալիր բերուած էր նաեւ Հայոց Ցեղասպանութեան սրբոց նահատակաց մասունքարանր:

44-օրեայ պատերազմէն յետոյ եղած մարտահրաւէրներուն մասին իր ուղերձին մէջ խօսած է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Մեր սուրբ նահատակների յիշատակի առջեւ նուիրական մեր պարտքն է համախմբուել եւ պաշտպանել արցախահայ մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրաւունքը, Հայաստան ու Արցախ մեր աշխարհի անվտանգութիւնը, կանխել Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան բարբարոս բռնազանցումը, որ չկրկնուի Նախիջեւանում իրագործուած մշակութային եղեռնը», նշած է Գարեգին Երկրորդը:

Ազգային Միասնութեան Կոչով Նշուեցաւ Յեղասպանութեան 107-րդ Տարեդարձը



Այս տարի եւս համայն աշխարհի հայութիւնը ամէնուրեք, նշեց քսաներորդ դարու մեծագոյն արհաւիրքի Հայոց Յեղասպանութեան 107րդ տարեդարձը: Լոս Անճելոսի եւ շրջակայքի հայութիւնն ալ զանազան միջոցառումներով յիշատակեց մեր մէկ ու կէս միլիոն սրբացած նահատակները:

Տեղույս հայկական բոլոր վարժարանները անցնող շաբթուան ընթացքին մեծարեցին հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը: Իսկ Ապրիլ 24ին, հայկական առեւտրական հաստատութիւններու մեծագոյն մասը փակ մնացին: Նոյն օրը՝ մեր բոլոր եկեղեցիներու եւ հաւաքավայրերու մէջ առանձնապէս նշուեցաւ ցեղասպանութեան 107 ամեակը: Վարժարանները փակ մնացին Երկուշաբթի Ապրիլի 25ին:

Այս բոլորի կիզակէտն էր Մոնթեպելլոյի Ապրիլեան նահատակներու յուշարձանը: Ան Շաբաթ օր Ապրիլի 23ին ժամադրավայրը դարձած էր շրջանիս կրօնական, քաղաքեան եւ ազգային-հասարակական կազմակերպութեանց առաջնորդներուն եւ ղեկավարներուն: Այս առթիւ սրբադասուածներու յատուկ բարեխօսական եկեղեցական արարողութիւն մը տեղի ունեցաւ, մասնակցութեամբ հոգեւոր առաջնորդներ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանի, Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանի, Վեր. Հենրիկ Շահնազարեանի եւ այլ հոգեւոր հայրերու: Այնուհետեւ առաջնորդները ոգեկոչելէ ետք թուրք եաթաղաններու բարբարոսութեանց զոհ զացած մեր անմեղ նահատակներու յիշատակը՝ սրտաուռ խօսքերով եւ կարեւորութեամբ շեշտեցին պահանջատէր հայ ժողովուրդի մերօրեայ միասնականութեան եւ համերաշխութեան անհրաժեշտութիւնը:

Նոյն օրը երեկոյեան իրաքահայերու Կլենտէյլի ակումբին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք նուիրուած մեծ եղեռնի 107-ամեակին: Միեւնոյն ժամանակ Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին քով տեղի ունեցաւ երիտասարդական հսկում:

Կիրակի, Ապրիլի 24ին, Հոլիվուտի Փոքրիկ Հայաստան (Little Armenia) թաղամասին մէջ տեղի ունեցաւ Միացեալ Հայ Երիտասարդութեան բազմամարդ հաւաքը: Խիստ ուշագրաւ էին պարզուած պաստառներն ու ցեղասպանութիւնը դատապարտող վանկարկումները:

Նախորդ տարիներու նման այս տարի եւս, խուռներամ բազմ

մութիւն մը հաւաքուած էր Պէյվըրլի Հիլզի թրքական հիւպատոսարանին առջեւ: Հայկական եւ արցախեան դրօշներ պարզած ցուցարարները արդարութիւն պահանջող եւ ցեղասպանութիւնը դատապարտող վանկարկումներ կատարեցին:

Մեծ Եղեռնի 107րդ տարեդարձին առթիւ Կլենտէյլ քաղաքի քաղաքապետական խորհուրդը, 21րդ անգամ ըլլալով, կազմակերպած էր Հայոց Յեղասպանութեան նուիրուած ժողովրդային յիշատակի հանդիսութիւն մը, որ տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7ին Ալեքս թատերասրահին մէջ: Աւլի քան հազար հայորդիներու մէջ կը

զտնուէին տասնեակ մը նահանգային եւ քաղաքապետական ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավարն էր Կլենտէյլի նորընտիր քաղաքապետ Արտաշէս Քասախեան, որուն հայ դատին ի նպաստ ելոյթը մեծապէս

վարդապետի ստեղծագործութիւններէն:

Կիրակի Ապրիլի 24ին Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցուց մէջ տեղի ունեցաւ ոգեկոչման համերգ, ի յիշատակ Արցախի 44 օրեայ պատերազմին եւ 1915-ի Յեղաս-



տպաւորեց ներկաները: Յեղասպանութիւնը դատապարտող եւ հայ ժողովուրդի պահանջատիրական արդար դատին ի նպաստ խրախուսիչ ելոյթներով հանդէս եկան ԱՄՆ-ի սէնատի անդամ Ատամ Շիֆ, Գալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Անթօնիօ Փորթմանթինօ, ինչպէս նաեւ Ատրին Նազարեան, Լօրա Ֆրիտման, Մարիա Գարիլլօ Տօնօ եւ ուրիշներ: Այս առթիւ գործադրուեցաւ նաեւ օրուան պատշաճ զեղարուեստական բացառիկ ճոխ յայտագիր մը, որ մեծ մասով կը բաղկանար անմահն Կոմիտաս

պանութեան 1.5 միլիոն նահատակներուն:

Լոս Անճելոսի հայկական բոլոր հեռուստակայանները Ապրիլ 24-ի օրը՝ նշեցին օրուան պատշաճ յայտագիրներով, նախաձեռնութեամբ Մեծ Եղեռնի ոգեկոչման հայկական Միացեալ Մարմին: Իսկ տեղական հեռուստակայանները՝ օրուան լրատուութիւններու ընթացքին, ուղիղ եթերի դրութեամբ, զանգուածային ձեւով հաղորդակից դարձուցին հայոց ցեղասպանութեան փաստը իրենց հեռուստադիտողներուն:

HMM Ladies Auxiliary

Mother's Day Celebration - Dinner

Salsa Dancers, DJ, Lottery

Tickets Donation \$100.

SATURDAY, MAY 7, 2022 AT 7:30 PM

AEBU Center 1060 N. Allen Ave. Pasadena

«Ցաւօք Սրտի»

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Այս արտայայտութիւնը յաճախակիօրէն կրկնուեցաւ երբ 2018-ին կը շրջագայէինք Արեւմտեան Հայաստանի քաղաքներով: Ամէն մէկ քաղաքի մասին խօսակցութեան մէջ, «ցաւօք սրտի» կը նշուէին, որ հազարաւոր տարիներ ապրած ու ստեղծագործած ըլլալով հանդերձ այնտեղ, ինչ-ինչ պատճառներով բռնի տեղահան եղանք հոնկէ, կորսնցնելով դարերու ընթացքին մեր կուտակած հարստութիւնն ու աւանդույթները: «Ցաւօք սրտի» կը նշուէին նաեւ մեր թերացումներն ու թերութիւնները, մինչեւ իսկ դաւաճանական արարքները, որոնք պատճառ դարձան մեր ձախողութեանց եւ պարտութեանց:

Այս արտայայտութիւնը բազմաթիւ անգամներ կրկնուեցաւ նաեւ 44-օրեայ պատերազմէն ետք, առնչուելով թէ՛ արտաքին թշնամիի արձանագրած յաջողութեանց եւ թէ՛ ներքին դաւաճաններու արաքներուն հետ: Ու աչքի առաջ ունենալով այն իրավիճակը, որուն մէջէն կ'անցնինք ազգովին, «ցաւօք սրտի» կրնանք նշել, որ այս արտայայտութիւնը կը մնայ շրթնային մակարդակի վրայ եւ չգար մտորումներու արդիւնք գիտակցական ըմբռնումէ: Այլապէս, «ցաւօք սրտի» ինչպէս է յաջորդէ այդ ցաւին

պատճառը գտնելու եւ դարմանը որոնելու գիտակցութիւնը, որ պէտք է խուսափինք անգամի մը համար եւս ենթարկուելէ այդ նոյն ցաւին:

«Ցաւօք սրտի» կը շարունակուի մեր երազատեսութիւնը, երբ կը ճառենք Արեւմտեան Հայաստանի ազատագրութիւնէն, բայց ձեռքէ կու տանք 1600 տարիներու հողային կորուստներէ ետք Արցախեան ազատամարտի հողային բացառիկ նուաճումը: Կ'անտեսենք մեր պատմահայր Խորենացիի էական պատգամները, սկսելով մեր վերմակին համեմատ մեր ոտքերը երկարելու խրատէն: Երազային աշխարհի մէջ աւելի հեշտ կը գտնենք սլանալ, քան իրապաշտ աշխարհի մէջ քայլ առ քայլ առաջ երթալ:

«Ցաւօք սրտի» կը շարունակուի մեր ինքնախաբէտութիւնը: Կ'անտեսենք Ռաֆֆիի ախտաճանաչումը, որ «ինքնախաբէտութիւնը մի աչք միայն ունի եւ նա ամէն բան լաւ կողմից է տեսնում. նրա միւս աչքը կոյր է տգեղութիւն»

ներ, այլանդակութիւններ եւ մոլորութիւններ տեսնելու համար: Եւ այս պատճառաւ այն թշուառականը, որ մի այդպիսի ողորմելի դրութեան մէջ է գտնուում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետեւ իր մէջ թերութիւններ չէ տեսնում: Եւ նրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում դէպի առաջ դրմութիւն եւ ոչ մի պահանջ կեանքից չունի: Ինքնախաբէտութիւնը բարոյական ինքնասպանութիւն է:»

«Ցաւօք սրտի» կը շարունակուի մեր պոռոտախօսութիւնն ու պարծենկոտութիւնը: Կ'անտեսենք Լէօյի ախտաճանաչումը, որ մեղաւոր ենք մենք՝ «մտաւորականներս, գործիչներս, որ երեխաների պէս հաւատացինք լուսաւոր մարդկութեան խղճմտանքին, մարդկայնութեանը, վաճառվող միջազգային մամուլին, բորենի, շնական դիպլոմատներին... Մենք պոռոտախօսներս, մեծ խօսողներս, մենք, որ ստեղծեցինք եւ անուցինք կուսակցութիւններ, որոնց մէջ մարմնացաւ հայ մտաւորականների պոռոտախօսութիւնը, պարծենկոտութիւնը եւ եղբունական տգիտութիւնը:»

Մինչ մենք յոյժ կարեւոր կը նկատենք, որ նախագահ Պայտըն անցեալ տարուան իր Ապրիլեան ուղերձին մէջ վերջապէս գործածեց ցեղասպանութիւն բառը, միւս կողմէ կ'անգիտանանք նաեւ, որ ան նոյն բառը գործածեց որակաւորելու համար Ուքրանիոյ մէջ կատարուածը: Որ պարզապէս կը մանրացնէ ցեղասպանութիւն եզրի ահաւորութիւնը: Այս փաստը պէտք է մեզ մղէ, որ օտար քաղաքական առաջնորդներէ յայտարարութիւններ կորզելու աշխատանքէն անդին, կայ աւելի էականը՝ սեփական տունը կարգի բերելու եւ հզօրացնելու աշխատանքը, որը ազդու վառելանիւթ պիտի հայթայթէ մեր թնդանութիւն:

Թող մեր այս խորհրդածութիւնը չ'ընկալուի սոսկ որպէս «ցաւօք սրտի» միթիւարական խօսք, այլ՝ հրաւեր զգաստութեան, վերանայելու մեր մտածելակերպն ու գործելաձեւը եւ պատշաճեցնելու իրապաշտ աշխարհի պարտադրանքներուն: Որպէսզի Միամանթօյի նման յուսախաբ, չբաւականանանք թէքնելով մարդկային արդարութեան ճակատին:

Ապրիլ 24-ին ԱՄՆ Նախագահը Կրկին Օգտագործեց Ցեղասպանութիւն Եզրոյթը

Շարունակուած էջ 1-էն

կենք մեր ջանքերը՝ ապաքինելու եւ կառուցելու աւելի լաւ, աւելի խաղաղ աշխարհը, որ մենք կը փափաքինք մեր երեխաներուն համար», կը յայտարարէ ԱՄՆ նախագահը՝ շարունակելով. «Աշխարհը, ուր կը յարգուին մարդու իրաւունքները, ուր մոլեռանդութեան եւ անհանդուրժողականութեան շարքերը չեն անդրադառնար մեր ամէնօրեայ կեանքին վրայ, եւ ուր մարդիկ ամէնուր ազատ են՝ ապրելու իրենց կեանքը արժանապատուօրէն եւ ապահով:»

Սա նաեւ հայ ժողովուրդի ուժի եւ դիմացկունակութեան մասին խորհելու պահն է, կը շեշտէ Պայտըն՝ մանրամասնելով. «Ցեղասպանութեան ենթարկուելէ չետոյ հայ ժողովուրդը վճռական էր՝ վերակառուցելու իր համայնքը եւ իր մշակոյթը, այնքան յաճախ՝ նոր տուններու եւ նոր հողերու մէջ, այդ շարքին՝ Միացեալ Նահանգներու մէջ: Ամերիկահայերը Միացեալ Նահանգներու կենսական մաս կը կազմեն: Անոնք մեր պետութիւնը աւելի ուժեղ կը դարձնեն՝ նոյնիսկ կրելով ողբերգական գիտելիքը իրենց նախնիներուն հետ կատարուածին մասին: Մենք կը ճանչնանք անոնց ցաւը եւ կը յարգենք անոնց պատմութիւնը:»

«Այսօր՝ 107 տարի անց, ամերիկացի ժողովուրդը կը շարունակէ յարգել ցեղասպանութեան մէջ գոհուած բոլոր հայերը», կ'ամփոփէ իր ուղերձը Միացեալ Նահանգներու նախագահը:



ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
 Կը հրաւիրէ ձեզ
ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅԻ ՄԸ
ՅՐԱՆԴ ՏԻՆՔԻ
 ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ 15ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ
ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
 Invites you to attend
15TH COMMEMORATION OF HRANT DINK'S ASSASSINATION



Բացման խօսք՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան (Պոլսահայ Միութեան Հոգաբարձու եւ Մշակութային Յանձնախումբի ատենապետ)
 Opening remarks Dr. Ohannes Kulak Avedkiyan (OIA Trustee and Chairman of Cultural Committee)
Հանդիսավարուհի՝ Տկ. Ռոզալին Մատոեան / Master of Ceremonies Mrs. Rozalin Madoyan
 (Կրթական մշակ՝ ՀԲԸՄ Մասնակեան- Տեխիքեան Վարժարանի Հայերէն Լեզուի եւ Հոգեբանութեան ուսուցչուհի)

KEYNOTE SPEAKERS
ՉԵԿՈՒՅՈՂՆԵՐ



Դոկտոր Կարապետ Մուսմեան
(Պատմաբան, Լեզուաբան, արաբագետ եւ օսմանիստ)



ՄԱՐՔ ՉԵԼԵԱՆ
(Գործարար եւ Ելեւմտագետ)



Իրաւաբան Կարօ Ղազարեան
Աքթիւիսթ եւ անցեալ Երկու Շրջաններու Հայ Իրաւաբանական Կաճառի Ատենապետ

Sunday, May 1st, 2022 at 6 pm
 Organization of Istanbul Armenians
 "Krikor and Aved Kurkcuglu Hall"
 19726 Sherman Way, Winnetka, CA RECEPTION - Հիւրասիրութիւն

Շնորհով՝ Հրանդ Տինքի
 Հոգիի Ազատութեան եւ
 Արդարութեան Տարեկան Շքանշանը
 Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան
 հանգուցեալ Նախագահ՝
 Իրաւաբան՝ Էտիլին Միլասեանի (Յետ Մահու)



Մանրամասնութեանց համար հեռաձայնել՝
Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի (818) 800-1976

Հայապահպանունը Ազգային Դաստիարակութեան Պարունակին Մեջ



ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

«Ես հայ եմ»:
«Հայը քրիստոնեայ է»:
«Հայը առաջին քրիստոնեայ պետութիւնն է աշխարհի վրայ»:
Շարքը երկար է...

Բայց ո՞վ է որո՞նք են այս արտայայտութիւններուն հեղինակները:

Անոնք ո՛չ մտաւորականներ են, ո՛չ ակադեմիականներ, ոչ ալ մասնագիտութիւններու տիրացած մարդիկ: Այս խօսքերուն հեղինակները հայ փոքրիկներ եւ պատանիներ են, որոնք կ'ապրին սփիւռքեան տարբեր երկիրներու մէջ:

Շոկտեմբեր 2021-էն սկսեալ եւ քանի մը ամիսներ առիթը ունեցայ մեծերու աշխարհէն փոխադրուիլ փոքրիկներու եւ պատանիներու աշխարհ: Երկար ժամանակ է ի վեր անջատուած էի անոնց հետ հաղորդակցելու ուրախութենէն: Ուրախութիւն կ'ըսեմ, քանի որ ուրիշ աշխարհ է եղեր մանուկներու հետ ըլլալը: Աստուածաշունչի ընկերութեան հրատարակած «Մանուկներու բացատրական Աստուածաշունչ»-ը բաժնելու ատեն առիթ ունեցայ հայկական վարժարաններ այցելելու Լիբանանի, Կիպրոսի, Քուէյթի եւ Տուպայի մէջ: Յիսուսի վկայութիւնը շատ ճիշդ է. «Եթէ մանուկներու պէս չըլլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք» (Մատթէոս 18.3):

Այցելութիւններու մէկ յատուկանշական երեւոյթը այն էր, որ առիթը ունեցայ խօսելու պատանիներուն հետ: Եթէ մէկ կողմէ հարցումներ ուղղեցի հայուն, անոր պատմութեան եւ Աստուածաշունչին մասին, բայց նոյնքան նաեւ՝ անոնց ազգային ինքնութեան եւ հաւատամքներուն մասին: Այս բոլորը թէ՛ զիս ուրախացուցին եւ թէ՛ ալ յոյսով եւ լաւատեսութեամբ լիցքաւորեցին՝ մեր ազգային ու հաւաքական կեանքերու ապագային առնչութեամբ:

Հայ մանուկ-պատանին ուշիմ է, արթուն, խելացի, սրամիտ, համարձակ եւ խիզախ: Անոնք մեծ խանդավառութեամբ պատասխանեցին բոլոր հարցումներուն: Տեսայ հայ մանուկ-պատանին, որ կ'ուզէ իր սորվածը, զիտցածը եւ տեսակէտը ըսել: Բայց կար աւելին: Հայ երեխան-պատանին կ'ուզէ իր սորվածը ըսել հպարտութեամբ: «Ես հայ եմ», «քրիստոնեայ», եւ

«Հայաստանը առաջին քրիստոնեայ պետութիւնն է»: Հանդիպումներս՝ հայ մանուկ-պատանիներուն հետ, ջերմացուցին հոգիս: Այս ջերմութիւնը տարաւ զիս անցեալ, երբ ես ալ կը մեծնայի իրենց նման, եւ քրիստոնէական հաւատքի հպարտութիւնը կեանքիս մէջ բոյն կը շինէր:

Անցնող ամիսներուն իմ հանդիպումներուս ընդմէջէն տեսայ նաեւ իւրաքանչիւրութիւններ: Իւրաքանչիւր մեր հայ մանուկ-պատանին խիզախութիւնն ու ուշիմութիւնն էր: Տեսայ հայ պատանին, որ արթուն է եւ զիտէ, թէ ինք ո՞վ է եւ ի՞նչ կ'ուզէ, թէ կուզ' իր պատանեկան պրիսմակէն: Այս բոլոր իրականութիւններն են, որոնք ինծի լաւատեսութեամբ ներշնչեցին, թէ՛ ունինք հայ նոր հասակ առնող սերունդ մը, որ ուժ է, եւ որ ուժ կրնայ դառնալ: Ուժը՝ ոչ ֆիզիքական եւ կամ թիւի հաշուարկով: Ֆիզիքականը եւ թիւը իրենց տեղը եւ կարեւորութիւնը կրնան ունենալ: Ուժը նոյնքան մտաւոր եւ իմացական իմաստով: Ուժը, որ կրնայ շատ բան աւելցնել հայուն արժէքի կեանքին, եւ որով կ'ունենանք նոր սերունդ մը՝ հայ եւ քրիստոնեայ: Այս գործընթացն է, որ պիտի յանդգնինք կոչել ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ: Հայապահպանումը կը շինուի եւ կը կերտուի: Շինուելու եւ կերտուելու այս գործընթացներուն գրաւականը ազգային եւ քաղաքացիական դաստիարակութիւնն է: Դաստիարակութիւնն է, որ հայը կը կերտէ եւ կեանքի մէջ արժէքներ կը շինէ, կը պահէ ու կ'ապահովէ հայուն պատմութեան շարունակականութեան հովովոյթը:

Հայապահպանումը հայը հայ պահելու մէջ չէ միայն: Հայապահպանումը կեանք է: Հայը կ'ապրի իր կեանքը անհատական, ընտանեկան ու, տակաւին, ընդհանրական իրականութիւններու մէջէն: Այս իմաստով հայապահպանումը ինքնամփոփ եւ ինքնիր մէջ ապրուած իրականութիւնն է: Ան կը բացուի շրջապատին ու աշխարհին եւ կը վկայէ, բայց նաեւ իր ներդրումը կ'ունենայ մէկ կողմէ ներհայկական իմաստով, բայց նոյնքան նաեւ՝ համամարդկային իրականութիւններու մէջէն: Ահա թէ ինչո՞ւ հայապահպանումը արդիւնք է ազգային եւ քաղաքացիական դաստիարակութեան, որ կը շինէ ու

կը կերտէ հայը եւ անոր կեանքը իր ամբողջական հասկացողութեան մէջէն:

Այս տարի կ'ոգեկոչենք Յեղասպանութեան 107-րդ տարելիցը: Յեղասպանութիւնը, որ թէեւ հայուն պատմութիւնը լեցուց արեամբ, ցաւով, ողբերգութեամբ եւ մարդկային, հողային եւ մշակութային անաւոր կորուստով, բայց եւ այնպէս չկարողացաւ ընկրկեցնել հայը: Հայուն պատմութիւնը շարունակուեցաւ եւ մինչեւ այսօր կը շարունակուի, որովհետեւ հայը հաւատաց, որ ազգային եւ քաղաքացիական դաստիարակութիւնը ամուր հիմք կը կազմէ իր գոյատեւման: Եթէ հայուն համար Տէր Զօրը եղաւ մէկ կողմէ «մահուան շուքի ձոր», այդ եղաւ նոյնքան նաեւ կեանքի մեկնակէտ:

րուն մէջէն: Դաստիարակութիւնը, որ հայը կերտեց, նաեւ սորվեցուց, թէ պէտք է ապրի իբրեւ հայ եւ հայօրէն իր ներդրումը ունենայ ազգային ու համամարդկային ընդհանրական կեանքի կերտելու առաքելութեան մէջ:

Հայապահպանման հիմքը դաստիարակութիւնն է: Ազգային եւ քրիստոնէական դաստիարակութիւնը, որ պիտի կերտէ հայ միտքը, հայ մարդը՝ իր ազգային, մշակութային եւ պահանջատիրութեան արժէքներու ինքնութեամբ եւ քրիստոնէական ու հոգեւոր գիտակցութեամբ: Հայ մարդը իր ազգային եւ քրիստոնէական արժէքներու գիտակցութեամբ է, որ պիտի պահպանուի: Հայապահպանումը գործընթաց է, ուր հայը կը մեծնայ եւ կը սորվի իր ազգային



Հայը Տէր Զօրէն սկսաւ գիտակցիլ, որ իր կեանքը պիտի շարունակէ ապրիլ՝ անկախ իրեն վիճակուած պատմութեան դժուար եւ դժբախտ ճակատագրէն: Հայկական կեանքը ապրելու այս դաստիարակութիւնը սկսաւ նոյնինքն Տէր Զօրէն, անցաւ հիւղաւաններէն եւ մինչեւ այսօր կ'ապրի սփիւռքեան տարբեր իրականութիւններ-

ու քրիստոնէական արժէքները: Եթէ սփիւռքի տարածքին հայը շինեց եկեղեցի, բայց նաեւ՝ դպրոց, մամուլ, ակումբ ու տակաւին: Այս բոլորը կը միտէր հայապահպանումի անհրաժեշտութեան, եւ մինչեւ այսօր ալ այդպէս է:

Հայապահպանումը միայն

Շար.ը էջ 18

2022

AEBU SCHOLARSHIP PROGRAM

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

626•344•7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE

1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Armenia Marks 107th Anniversary of the Genocide



YEREVAN — Tens of thousands of people marched to the Tsitsernakabert memorial in Yerevan to mark the 107th anniversary of the Armenian genocide in the Ottoman Empire.

People from Armenia, Nagorno-Karabakh, the Diaspora, and foreign guests visited the Tsitsernakabert Memorial to pay tribute to the memory of the more than 1.5 million Armenians who fell victim to the Genocide in the early 20th century.

The annual daylong procession began with an official wreath-laying ceremony at the hilltop memorial led by Prime Minister Nikol Pashinyan and President Vahagn Khachaturyan.

On this occasion PM Pashinyan issued a message that reads as follows:

107 years ago, the Armenian people faced a ruthless tragedy, the genocide. The goal of Ottoman Turkey was to exterminate our ancestors. 1.5 million Armenians were

killed, hundreds of thousands migrated to different parts of the world, as a result of which it is difficult today to find a place on the planet where there are no Armenians. The cultural, spiritual and religious heritage of the Armenian people suffered irrevocable losses, thousands of schools, churches and monasteries were destroyed.

Despite the inhuman atrocities, our people in the last century have been able to straighten their backs, preserve their identity, and restore an independent state as a result of unity, unremitting work, and consistent efforts. And this became the greatest proof of the viability of our people.

The denial, distortion of historical facts, genocides, crimes, not facing the truth, the connivance of the international community gives

Continued on page 4

Cavusoglu Flashes Grey Wolves Sign to Armenian Protesters in Uruguay



MONTEVIDEO — Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu's visit to Uruguay ended with a controversy where he flashed the gesture of the nationalist Gray Wolves organization to demonstrators from the Armenian community in Uruguay who were marching in commemoration of the

Armenian Genocide.

Armenian organizations in Uruguay condemned Cavusoglu's actions. The Uruguayan Foreign Minister has summoned the Turkish ambassador to the ministry on Monday to explain his acts.

Continued on page 3

President Biden: American Continues to Honor All Armenians Who Perished in the Genocide



WASHINGTON, DC — US President Joe Biden issued the following statement on Armenian Remembrance Day:

On April 24, 1915, Ottoman authorities arrested Armenian intellectuals and community leaders in Constantinople. Thus began the Armenian genocide—one of the worst mass atrocities of the 20th century. Today, we remember the one and a half million Armenians who were deported, massacred, or marched to their deaths in a campaign of extermination, and mourn the tragic loss of so many lives.

As we reflect on the Armenian genocide, we renew our pledge to remain vigilant against the corrosive influence of hate in all its forms. We recommit ourselves to speaking out and stopping atrocities that leave lasting scars on the world. And, as we mourn what was lost during the Meds Yeghern, let us redouble our efforts toward healing and building the better,

more peaceful world that we wish for our children. A world where human rights are respected, where the evils of bigotry and intolerance do not mark our daily lives, and where people everywhere are free to pursue their lives in dignity and security.

This is also a moment to reflect on the strength and resiliency of the Armenian people. After enduring a genocide, the Armenian people were determined to rebuild their community and their culture, so often in new homes and new lands, including the United States. Armenian Americans are a vital part of the fabric of the United States. They make our nation stronger and more dynamic, even as they continue to carry with them the tragic knowledge of what their ancestors endured. We recognize their pain and honor their story.

Today, 107 years later, the American people continue to honor all Armenians who perished in the genocide.



SDHP Participates in Wreath Laying Ceremony at Montebello Genocide Monument

A special Wreath laying ceremony and requiem service was held on Saturday April 23rd at the Montebello Monument in commemoration of 107th anniversary of the Armenian Genocide.

The event was attended by all Armenian religious leaders of Western US, Armenian political parties and various community organizations.

SDHP delegation was led by Western US Executive Committee Chairman Vasken Khodanian with the participation of Gabriel Moloyan, Vartan Koroghlian, Vahe Atchabahan, Peter Darakjian and Hagop Ajemian.

No Document on Artsakh Status Being Discussed Now- Artsakh President



STEPANAKERT — Nagorno-Karabakh President Arayik Harutyunyan said on Monday that Prime Minister Nikol Pashinyan has assured him that Armenia will not back any agreements on the territory's status unacceptable to the Karabakh Armenians.

Commenting on the issue at a meeting with other officials in Stepanakert, Harutyunyan was quoted by his press office as telling them that "no document on the status of Artsakh (Karabakh) is being discussed at this stage."

He announced a "clear agreement with the prime minister of Arme-

nia to the effect that in case of any discussion on the future status of Artsakh at the international level the position of the Armenian side must be agreed with the opinion of the Republic of Artsakh's authorities and people."

According to Harutyunyan, after the 2020 war there is an increased need for closer ties between the governments in Armenia and Artsakh and a more effective cooperation with Armenia's partner agencies.

Pashinyan insisted on Friday that his administration has no plans to "surrender" Karabakh through a peace deal with Azerbaijan.

PM Pashinyan Congratulates President Emmanuel Macron on Re-election



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan has congratulated Emmanuel Macron on his re-election as President of France.

"I extend my warmest congratulations to Emmanuel Macron on his re-election and wish him the best for the next five years for the prosperity of the friendly French people and for the influence of France," PM Pashinyan said in a Twitter post.

"Armenia highly appreciates France's role as the OSCE Minsk Group Co-Chair in establishing long-term

peace in our region, and hopes that it will continue during the second five-year term of your presidency.

Looking forward to hosting you in Yerevan in the near future, I congratulate you again on your confident victory and wish you every success." Stated Pashinyan

Emmanuel Macron was elected to a second term as French president on Sunday evening with 58.2% of the vote.

His far-right challenger Marine Le Pen won 41.8% of the vote.



Governor Newsom Proclaims Day of Remembrance of the Armenian Genocide

SACRAMENTO – Governor Gavin Newsom today issued a proclamation declaring April 24, 2022 as "A Day of Remembrance of the Armenian Genocide" in the State of California.

The text of the proclamation is below:

PROCLAMATION

On April 24, 1915, the Ottoman Empire began its systematic genocide of Armenian people, a minority group that had long been treated as secondclass citizens. The Armenian Genocide began with the forced deportation and murder of hundreds of Armenian intellectuals and community leaders and ended with the deaths of 1.5 million men, women and children. It was the first genocide of the 20th Century.

As we remember the victims and survivors of the Armenian Genocide, we also honor the strength and resilience of the Armenian people. Forced to build new lives in all corners of the globe, Armenians bravely forged ahead in the face of unimaginable tragedy. Thousands made their homes in California, and we are greater for their contributions.

Today and every day, let us recommit ourselves to making certain that we never forget the Armenian Genocide, and that we always speak out against hatred and atrocities anywhere they occur.

NOW THEREFORE I, GAVIN NEWSOM, Governor of the State of California, do hereby proclaim April 24, 2022, as a "Day of Remembrance of the Armenian Genocide."

IN WITNESS WHEREOF I have hereunto set my hand and caused the Great Seal of the State of California to be affixed this 22nd day of April 2022.

Gavin Newsom
Governor of California

Erdogan Accuses MP Garo Paylan of Treason

ANKARA — Turkish President Recep Tayyip Erdogan has reacted angrily after Istanbul-Armenian member of Turkey's parliament Garo Paylan demanded that Ankara officially recognize the 1915 Armenian genocide in the Ottoman Empire.

Erdogan said that a corresponding parliamentary resolution drafted by the opposition Peoples Democratic Party (HDP) lawmaker Paylan, amounts to high treason.

The resolution not only calls for a formal recognition of the genocide but also says that the Turkish authorities must rename streets bearing the names of Ottoman masterminds of the genocide and offer Turkish citizenship to Armenian descendants of its survivors.

Paylan circulated the measure ahead of the 107th anniversary of the Armenia Genocide. Speaker Mustafa Sentop refused to include it on the parliament agenda on the grounds that it was contrary to the provisions of the rules of procedure.

Paylan's initiative provoked a storm of criticism from other senior Turkish officials as well as a spokesman for the ruling AKP party.

"We regard as clear treason the manifestation of such brazenness in this body symbolizing the expression of national will," Erdogan said after

chairing a cabinet meeting in Ankara on Monday.

Nationalist Movement Party (MHP) chair Devlet Bahçeli also criticized Garo Paylan for submitting the bill to the Turkish parliament.

"The fact that such a disgraced, instigator person is a member of the Turkish parliament is a shame for all of us. It's crystal clear by whom this rotten lawmaker is encouraged and with whom he is in solidarity," Bahçeli stated.

Erdogan said that the Turkish authorities will take "appropriate actions" against Paylan. But he did not clarify whether the 49-year-old lawmaker representing the pro-Kurdish opposition party HDP will face criminal charges.

The authorities have for years tried to strip Paylan of his parliamentary immunity from prosecution.

Speaking to the CNN-Turk TV channel, Paylan described the furious reaction to his initiative as unprecedented. He said that similar resolutions drafted by him in the past did not cause such a government outcry.

"I haven't changed, which means that Turkey has," he said, adding that Erdogan's government is no longer willing to tolerate public actions challenging the official Turkish version of the events of 1915. nians as genocide.

ACA Takes Part in Armenian Genocide Commemoration in Times Square



NEW YORK CITY, NY – The following is a speech given by Alisa Hovagimian Unell on behalf of the Armenian Council of America:

Reverend clergy, distinguished guests, honorable leaders of the community, ladies and gentlemen,

I am humbled and honored to speak to you all today about the first genocide of the 20th century.

Today/ we remember the day in history when 107 years ago, in Constantinople (present day Istanbul) more than 300 Armenian leaders, writers, and professionals were rounded up, deported and killed — along with 5,000 ordinary Armenians who were brutally butchered in the streets and in their homes.

Over 1.5 million Armenian lives were methodically and maliciously taken by the Turkish government. Lands, property, churches, and other pillars of Armenian culture were vandalized, desecrated, and destroyed. These were acts of hatred and violence — and they have yet to be atoned for. In fact, they have been compounded/ by the current Turkish and Azeri regimes to this day. Beginning with the Turkish government's 107 year policy of denial, to the outright aggression seen in the recent 44 Day war — whereby Azerbaijan's tyrant Aliyev aided by his Turkish counterpart Erdogan proceeded to attack and destroy the Armenian peoples in Artsakh. This was a continuation of their forefather's legacy of raping, killing and pillaging the Armenian peoples and their ancestral lands.

Since that time the Armenian survivors of the Genocide, who were spread to the far corners of the Diaspora, have fought for the recognition of the crimes against humanity perpetrated by the Turkish government. We have time and again offered

the hand of friendship, only to have it thrown back at us in contempt. For decades the world ignored our plight, and turned a blind eye to the truth in the name of expediency. But it is now, that world truly sees the price to be paid for their obliviousness. From the wars in the Middle East, to the genocides in Asia and Africa, to the full pitched battles on the fields of Europe. The world can no longer ignore the terrors that are bred by indifference to hatred.

Convenience and expediency are not worth the barrels of Azeri oil and gas that are stained with Armenian blood! Losing one's soul is not worth the laundered money that is soaked in Armenian blood! Now more than ever, it seems clear that if the Armenian people are to ever find peace and comfort in their homelands there must be a serious change in the attitudes of their neighbors. Now more than ever, we need to fight against the totalitarian fascist regimes that continuously deny their actions as Genocide.

We call upon the United States to continuously reaffirm recognition of the Armenian Genocide — we call upon them to apply the necessary available pressures upon those who deny it to come to terms with the crimes that were committed 107 years ago.

We also call the U.S. administration to take a stand against these fascist regimes, — regimes that aim to harm not only Armenia, but other neighbors and minorities in the region. Stop arming and stop giving funds to these Turkish and Azeri fascist dictatorial regimes!

Only then, can a true and lasting peace begin throughout the region. Only then can the pain and generational trauma endured be addressed and begin to heal.

Thank you

Cavusoglu Flashes Grey Wolves Sign

Continued from page 1

Prior to Cavusoglu's April 23 visit, the Armenian community had expressed their opposition to his trip in light of the eve of Armenian Genocide Remembrance Day and had asked the Minister of Interior to strengthen the security of events dedicated to the Armenian Genocide.

Uruguay's President Luis Lacalle Pou described as "regrettable" Cavusoglu's. Speaking to the press,

Lacalle Pou assured that the attitude of the Turkish foreign minister, Mevlüt Cavusoglu, should be "strongly criticized (...), the community is hurt, and rightly so."

In this sense, Lacalle Pou distanced himself from the policy of the Government of the Turkish president, Recep Tayyip Erdogan: "Advancing in commercial matters does not mean" that Montevideo agrees "with the internal or external policy" of the other party.

The Uruguayan foreign minister,

City of Glendale Designates April 2022 as "Genocide Awareness Month."



GLENDALÉ – The Glendale City Council on Tuesday April 19, presented a proclamation designating the Month of April as "Genocide Awareness Month."

With many significant dates commemorating historical genocides, including the beginning of the Armenian Genocide on April 24, 1915; the Warsaw Ghetto Uprising and beginning of the Holocaust on April 19, 1943; the Cambodian Genocide on April 19, 1975; and the Rwandan Genocide against the Tutsi on April 7, 1994, Mayor Kassakhian detailed.

"During this observation and acknowledgement of genocide awareness, we must pause to think of those who are currently under attack and those being persecuted for their identity. Glendale believes cultural diversity is achieved when our entire community acknowledges that its wholeness is based on the unique strengths of each of its community members and that we can no longer innocently harbor feelings of superiority and separatism in our society," the mayor read from commendations presented to local representatives of the "oldest Armenian community and political organizations still working one hundred years later."

"Glendale is home to one of the largest Armenian American populations per capita in the diaspora and Armenians in Glendale have enriched our city through their leadership and contributions in business, academia, government and the arts," added Kassakhian. "Many have family members who were affected by the horror and evil of the Armenian Genocide and its ongoing denial. Every person should be made aware and educated about the Armenian Genocide and other genocides and crimes against humanity — presented by this great grandson of survivors of the Armenian Genocide."

Glendale resident and Armenian Council of America Board member Mr. Krikor Moloyan thanked the City of Glendale on behalf of ACA for always taking a firm stand, upholding truth, human rights and justice in particular when it comes to issues of the Armenian Genocide and the Armenian people. "I'd like to bring attention to the numerous ethnic minorities across

Francisco Bustillo, joined the condemnation of Lacalle Pou on Sunday afternoon and called the gesture of his Turkish counterpart "inadmissible" during the 107th anniversary of the Armenian genocide.

the globe who are being persecuted and ethnically cleansed. Every single genocide which is denied or gone unrecognized continues to perpetuate the same cycle of genocide and afford other regimes to continue that persecution" stated Mr. Moloyan. "In particular, I'd like to point out the ethnic Armenians living in the Republic of Artsakh today who are being ethnically cleansed and persecuted by the Azerbaijani regime. Perhaps if the American community, as a whole, recognized the Armenian Genocide decades ago and continued to seek that level of truth and justice, perhaps the continued ethnic cleansing of Armenians may have been stemmed at the root. Hopefully, we may see that day come yet again."

Councilmember Paula Devine added, "I'm of Ukrainian descent and I feel as if there's a genocide right before our very eyes. I have always supported the Armenian community and I will always support you. We shall never forget — a thousand years from now — we shall never forget."

"It is tragic what's going on in Ukraine but there are many ongoing situations of genocide and crimes against humanity that don't get this level of attention including, of course, what's happening in Artsakh, what's happening in western China with the Uyghurs, what's happening in Myanmar with the Rohingya. It's a tragedy of human history that this seems to just continue," Councilmember Dan Brotman said. "I guess what we can do is call it out, as loudly as possible, and continue to condemn these acts and hold the perpetrators accountable, even if they are long gone in the distance of history."

Councilmember Vrej Agajanian offered a single quote from Adolf Hitler at the conclusion of the Obersalzberg speech in 1939: "Who, after all, speaks today of the annihilation of the Armenians?"

Echoing Councilmember Agajanian's reference, Councilmember Ara Najarian rhetorically inquired "Who after all today speaks of the genocide of the Artsakh Armenians only two years ago? No one speaks about it and again history repeats itself in the most vile of ways."

Bustillos, who on Saturday summoned the Turkish ambassador to a meeting on April 25 to explain the event, affirmed that the Uruguayan government rejects "any invocation or offensive gesture that generates violence."

Armenian Genocide Monument in Ixelles, Belgium, Desecrated



BRUSSELS — The Armenian Genocide monument in Ixelles, Brussels has been desecrated, the Committee of Armenians of Belgium reports.

The Committee condemns this desecration committed the day after the commemorations of the 1915 genocide, Sunday 24 April.

“This act can only be interpreted as an expression of hostility and an attempt to intimidate Belgians of Armenian origin, most of whom come from families who were victims of the

genocide. The denial of the Armenian genocide is indeed the most common expression of the strong anti-Armenian prejudice promoted in Belgium as elsewhere by the authorities of the Republic of Turkey and by associations and elected officials linked to it,” the Committee said.

The monument has been marked with insults and three crescent moons. The text of the graffiti on the monument also targets Garo Paylan, ethnic Armenian member of the Turkish Parliament.

Armenia’s Byurakan Observatory Listed as IAU Outstanding Astronomical Heritage



YEREVAN (Armradio) — The International Astronomical Union (IAU) has listed the Byurakan Observatory in Armenia as Outstanding Astronomical Heritage.

The international portal briefly presents the history of the Observatory, its activity and achievements.

The Byurakan Observatory is presented as the most important astronomical center in Eastern Europe and Middle East region, both by its scientific instruments and achievements.

The Observatory was founded in 1946 on the initiative of Viktor Amazaspovich Ambartsumian (1908–1996), the first director and famous Armenian scientist of the 20th century. Since 1998 the Byurakan Observatory bears the

name of Ambartsumian.

The erection of the buildings started in 1946 under the supervision of famous architect Samvel Safarian (1902–1969), who was specialist for science buildings. The architectural ensemble of the observatory (1951 to 1955) consists of two telescope towers, laboratory buildings, central building, conference hall, and guest house.

Byurakan Observatory organized many international astronomical meetings and the astronomers were active in the International Astronomical Union (IAU): V.A. Ambartsumian was IAU President in 1961–1964 and Vice-President in 1948–1955, B.E. Markarian and E.Ye. Khachikian were Presidents of IAU Commission No. 28 (Galaxies, 1991–1994).

Armenia Marks 107th Anniversary of the Genocide

Continued from page 1

birth to new atrocities and crimes.

The civilized world, the international community has a lot to do in this direction, to prevent other such crimes regardless of political interests, first of all valuing human life, regardless of nationality. It is the recognition and condemnation of the genocide that must stop new crimes.

I would like to emphasize that Armenia will continue to actively contribute to the efforts of the international community to prevent genocides, crimes against humanity, and to combat discrimination and intolerance on the grounds of ethnicity, religion and race.

The agenda of international recognition of the Armenian Genocide should serve to strengthen Armenia’s security guarantees. This agenda will serve the government not to increase regional tensions, but rather to defuse the region.

The agenda of international recognition of the Armenian Genocide should service the strengthening of Armenia’s security guarantees. The Government will use this agenda not to increase regional tensions, but rather for the goal of defusing the regional tensions.

Medz Yeghern is the most tragic page in the history of the Armenian people. And it is an opportunity for us not only to honor the

memory of our innocent martyrs, to bow before them, but also to ponder about our history, our past, present and future. It is an opportunity for us to state that the Armenian people must have more and more opportunities and levers of having control of their own destiny, they must be able to transfer their own destiny from the sphere of decisions of others to the sphere of their own decisions.

The most practical expression of such a situation is the independent state, with the maximum maturity level of all its institutions, decision-making capabilities and mechanisms. This realization has led us to the agenda of opening an era of peaceful development for our people and the region, because the most effective tool for ensuring our own security is the accomplished statehood and peace. And we must pursue this path.

This is yet another reason why we are holding talks aimed at normalizing relations between Armenia and Turkey. We hope that the aspirations of the Turkish side are sincere, and we will be able to move forward in this direction.

At the same time, our task today is to build a dignified, accomplished democratic state by realizing the potential of all Armenians.

We must consistently direct the consolidation of pan-Armenian potential and capabilities towards this very goal.

Armenia to Host European Weightlifting Championship 2023



YEREVAN — For the first time Armenia will host the European Weightlifting Championship, the Ministry of Education, Science, Sports and Culture reported.

The European Weightlifting Federation confirmed in an official letter sent to Armenian Weightlifting Federation that the 2023 championship will be held in Yerevan. The concrete dates are still being clarified, but the championship will be held in a time span from April 1 to 30.

Deputy Minister of Education, Science, Culture and Sports Karen Giloyan said the Armenian government will do everything possible to hold the event at the highest level:

“This is really a good opportu-

nity to show again one of our strongest sports, to tell Europe that we have good weightlifting. It will also help in general to increase the popularity of the sport. We have to do our best to hold the European Championships at a very high level.’

The European Weightlifting Championship in Armenia will be ranked for the 2024 Summer Olympics in Paris.

At the end of March, Minister Vahram Dumanyan received European Weightlifting Federation (EWF) President Antonio Conflitti and Secretary General Milan Mihajlovic, who visited the Karen Demirchyan Sport-Concert Complex that will host the European Championship next spring.

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Ջարդերը

ԱՐՄԵՆ ՔԻՐՔԵՏԵԱՆ
(Շարունակուած նախորդ թիւէն)

Հրեաներն ու տէօնմէները տեղ-
ւոյն օթեակներուն միջոցով սերտ
յարաբերութիւններ կը մշակէն իթ-
թիհատականներու հետ ու անոնց
աջակցութիւն ցոյց կու տան: Թա-
ւաթ կ'ընտրուի Միջին Արեւելքի
վրայ իր ազդեցութիւնը տարածած
Grand Orient de la Turquie օթեա-
կին գերագոյն վարպետը՝ «մասո-
նապետը»: Միոնիստական շարժու-
մը այս օթեակներուն միջոցով կը
թափանցէ իթթիհատէն ներս:

Միոնիստական շարժումի հիմ-
նադիր Թէոտոր Հերց (Theodor
Herz) սուլթան Համիտի կը մօտե-
նայ, անկէ Եւրոպայի հրեաներուն
դէպի Պաղեստին գանգուածային
գաղթի արտօնութիւն կ'ուզէ՝ փո-
խարէն խոստանալով պետութեան
պարտքին կէսը վճարել ու Եւրո-
պայի մէջ սուլթանին հակաճառող
հայկական թերթերը լռեցնել: Հա-
միտ այս առաջարկը կը մերժէ,
սակայն կը թոյլատրէ, որ հրեաներ
անհատապէս այդ շրջաններուն մէջ
հող գնեն:

Օսմանցի թուրքը մինչեւ 1908-
ի սահմանադրութեան հռչակումը
քրիստոնեայ փոքրամասնութիւն-
ները չէր զինուորագրած: Հետեւա-
բար միայն ինքն էր, որ պատերազ-
մական ճակատներու վրայ մեռած՝
«շեհիթ» եղած էր, իսկ քրիստոն-
եան իր աւօրեան շարունակած:

Ընդգրկուած այս քաղաքա-
կանութեան հետեւանքով ստեղծ-
ուած դասակարգային բաժանու-
մէն դժգոհ օսմանցի թուրքին մէջ
նախանձը, չար նախանձը կը զօրա-
նայ, որ անոր ատելութեան եւ
վրէժխնդրութեան զգացումները կը
մտարակէ:

Մինչեւ 19-րդ դարու սկիզբը,
օսմանցին Եւրոպայի քրիստոնեայ
պետութիւնները արհամարհած էր,
անոնց կարեւորութիւն չէր տուած:
Անոնց հետ հաւասարէ-հաւասար
քաղաքական համաձայնութիւններ
ստորագրելը իր կրօնական համո-
զումներուն եւ հասկացութիւննե-
րուն հակառակ էր: Ինքզինք այն-
քան բարձր նկատած էր, որ եւրո-
պական լեզուները սորվելն իսկ
իրեն համար վարկաբեկում նկա-
տած էր:

19-րդ դարու երկրորդ կէսէն
սկսեալ, օսմանեան բանակը արդի-
ականացնելու համար կայսրութիւնը
կը ստիպուէր եւրոպական արհես-
տագիտութեան օգտուիլ: Սա՛ հա-
ճելի երեւոյթ մը չէր: Ասիկա
Արեւմտաեւրոպացի գերակայութիւնը բա-
ցայայտօրէն ընդունիլ էր:

Երկիրը փրկուածէ ազատելու
նպատակով գործի գլուխ եկած
Իթթիհատ կուսակցութիւնն ալ այդ
փրկուածին չի կրնար արգելք ըլ-
լալ: Սուլթան Համիտի գահընկէ-
ցութիւնն ալ օգուտ չ'ունենար:

18 Հոկտեմբեր 1912-ին կը
սկսի Պալքանեան պատերազմը:
Պուլկարները մինչեւ Չաթալճա կը
յառաջանան: Սերպերը ամբողջ Մա-
կեդոնիան կը գրաւեն: 1829-ին իր
անկախութեան տիրացած Յունաս-
տանը կը գրաւէ Սելանիկը եւ
Եգէական կղզիները: Օսմանցիները
էտիրնէն մինչեւ Ատրիական Ծով
իրենց իշխանութեան ենթակայ հո-
ղերը կը կորսնցնեն: Նոյնիսկ Կ.Պոլ-
սոյ գրաւման վտանգին հետ դէմ-
յանդիման կու գան: Պետական
աւագանին, գանձը, արխիւները
էսքիշէհիւր տանելու համար պատ-
րաստութիւններ կը կատարեն:

Չաւէն պատրիարք կը գրէ.
«1908-ի Օսմ. Սահմանադրութեան
վերահաստատութենէն ետք, Օս-
մանեան պետութեան բաղկացուցիչ
տարրերը, անկեղծ նկատելով թուր-
քերու յայտարարութիւնները, սի-
րով համերաշխած էին, սակայն
շատ շուտով յուսախաբ եղան:

Հայերը՝ 1909-ի Կիլիկիոյ կո-
տորածէն ցնցուեցան, իսկ եւրոպա-
կան թուրքիոյ բնակիչները կը
տեսնեն որ ոչինչ փոխուած էր
երկրին վարչութեան մէջ եւ կը
շարունակուէր «տիրող ազգ»-ի
(միլլեթ-ի հաքիմէ) տեսութիւնը,
որով թուրքերը չէին հանդուժե-
ր ոչ-իսլամ տարրերուն իրենց հաւա-
սար իրաւունքներ ունենալը երկ-
րին մէջ:

Ասիկա պատճառ եղաւ Պալ-
քանեան պատերազմին եւ թուրք-
իան Եւրոպայէն դուրս ձգուեցաւ եւ
բոլորովին տկարացաւ» (էջ 324):

Եւրոպացիներու գերակայու-
թիւնը բացայայտօրէն զգալի է:
Նուաստացումը ծնունդ կու տայ
իրենց փառաւոր անցեալը վերապ-
րելու ցանկութեան: Զինադադա-
րէն յետոյ, Օսմանեան կայսրու-
թեան պատմութեան մէջ առաջին
անգամ 1453-ին Ֆաթիհ սուլթան
Մեհմեթի կողմէ Կ.Պոլսոյ գրաւման
տարեդարձը կը տօնուի՝ յիշելու
համար, թէ իրենք Ֆաթիհներու,
Քանուխներու թոռներն են:

Բայց եւ այնպէս «Հիւանդ
մարդ»-ուն վիճակը ծանր է:

Օսմանեան կայսրութեան կոր-
ծանուծով թրքութեան ալ անհե-
տանալու գաղափարը մտաւորա-
կան շրջանակին մէջ խուճապի մը
պատճառ կ'ըլլայ: Պալքանեան պա-
տերազմէն յետոյ, միւս ազգերու
դէմ զգացուած ատելութեան եւ
թշնամութեան հետեւանքով ծնունդ
կ'առնէ թուրք ազգային գիտակ-
ցութեան գաղափարախօսութիւնը
եւ թրքացնելու քաղաքականու-
թիւնը:

Երբ այլեւս Օսմանեան կայս-
րութիւնը պատերազմներուն փո-
խանակ յաղթանակներ արձանագ-
րելու հողային կորուստներ կ'ունե-
նայ, այդ հողամասերէն դէպի Անա-
տոլու գաղթեր կը սկսին: Միլիո-
նաւոր գաղթականներ, պատրաստ-
ուած ծրագրի մը համաձայն, Անա-
տոլուի գանազան վայրեր կը տե-
ղաւորուին: Հայերու մեծամասնու-
թիւն կազմած նահանգներուն մէջ
1878-էն մինչեւ 1904 շուրջ 800.000
գաղթականներու տեղ կը տրուի:
Գաղթականներ իրենց բնակութիւն
հաստատած վայրերը հայրենակ-
ցատեան միութիւններ կը հիմնեն ու
վրէժխնդրութեան զգացումը վառ
պահելու նպատակով ալ թերթեր
կը հրատարակեն, ուր կարելի է
կարդալ հետեւեալներուն նման տո-
ղեր, որոնք օրուան մտայնութեան
եւ հետապնդուած քաղաքականու-
թեան ցայտուն օրինակներ են.-

Եյ միւսլիման քեմտիմի հիչ
աւուքմա
Եիւրեղիմի եօժ ալմատան սօ-
ղուքմա
(Ո՛վ մահմետական, ինքզինքդ
մի միլիթարեր,
Վրէժ չ'ըլուծած սիրտդ մի
պաղեցնէր)

Քապրիմտ միւսթերիի ույու էյ
նամտար աթամ
Ելատընըն պուկիւնքիւ ատը
սատի ինթիքամ
(Գերեզմանիդ մէջ հանգիստ
քնացիր, ո՛վ անուանի հայրս,
Չաւկիդ այսօրուան անունը

վրէժ է)
Պալքանեան պատերազմով
կորսնցուած հողերը, ի մասնաւորի
Իթթիհատ վէ թերաքքի կուսակ-
ցութեան առաջնորդներուն ծննդա-
վայր Մակեդոնիոյ կորուստը, մեծ
ցաւ պատճառած է: Յառաջիկային,
գրագէտ-լրագրող Հիւսէյին ճա-
հիթ Եալչըն «Ռումելիէն արտաքս-
ուելուն տուած ցաւը երբեք չեմ
մոռցած», գրած է:

Չաւէն Տէր Եղիայեան պատր-
իարք կը գրէ. «Ռումելիցի բոլոր
պետական պաշտօնեաները նշանա-
ւոր եղան իրենց քրիստոնէատեաց
զգացումներով»:

Կորսուած հողերու վերագ-
րաման եւ վրէժ լուծելու փափաքը
թուրք ազգայնականութեան վայ-
րագ ուղղութիւն մը կու տայ: Այն
վրէժը, որ «գինեպան յոյն»-էն,
«խոզարած սերպ»-էն, «կաթնա-
վաճառ պուլկար»-էն չէին կրցած
առնել, հայաշատ շրջաններ տեղա-
ւորուած գաղթականներու՝ «մու-
հաճիթ»-ներու օգնութեամբ Առա-
ջին Աշխարհամարտի ընթացքին
հայերէն կ'առնեն՝ «մեզի կոնակէն
զարկին» պատճառաբանութեամբ:



Գերմանիոյ Վիլհելմ Բ. կայսրը

Ըստ թուրքերուն, քրիստոնե-
այ փոքրամասնութիւնները, հար-
կաւ հայերն ալ, իրենց շրջանի
մահմետականները կը գրգռէին եւ
գրգռուած մահմետականն ալ երբ
կոտորածի սկսէր, փոքրամասնու-
թիւնները ազմուկ կը հանէին ու
եւրոպական պետութիւններու եւ
Ռուսիոյ միջամտութիւնը կ'ապա-
հովէին: Փոքրամասնութիւնները
իրենց այս ընթացքով մեծ պետու-
թիւններուն կայսրութեան ներքին
գործերուն խառնուելուն պատճառ
կ'ըլլային:

Արեւմտեւրոպացի կողմէ մարդ-
կային իրաւունքները պաշտպանե-
լու նպատակով եղած միջամտու-
թիւնները կը նկատուէին ներքին
գործերուն խառնուելու, երկիրը
բաժնելու, օսմանեան հողերուն տի-
րանալու պատրուակներ: Փոխանակ
մարդկային իրաւունքներու գա-
ղափարին հետ հաշտուելու՝ գայն
կը մերժէին, այս գաղափարին
հանդէպ ատելութիւն կը զգային,
ինչ որ տակաւին՝ 2020-ներուն կը
շարունակուի, ու իրենց ատելու-
թիւնը վայրագութիւններ գործադ-
րելով կը ցուցաբերուի: Փոքրա-
մասնութիւններու բարեկարգու-
թեան պահանջները կը նկատուին
մեծ պետութիւններուն կողմէ եր-
կիրը բաժան-բաժան ընելու նպա-
տակով պատրաստուած դաւեր: Ուս-
տի բարենորոգութեան բոլոր պա-
հանջները լինելու եւ չլինելու
ակնոցով դիտած՝ արիւնալի ու

բարբարոսական միջոցներով
գսպած էին:

Կիրարկուած բռնութիւննե-
րուն եւ բարբարոսութիւններուն
մէջ միշտ իրաւացի ըլլալու տեսա-
կէտը ընկալեալ սովորութիւն մըն
էր: Ահա՛ թէ պատմաբան Եուսուֆ
Հիքմեթ Պալուր ինչ կը գրէ. «Հարց
պէտք է տանք, թէ նախ ո՞վ սկսած
է կոտորածի: Թուրքերը առանց
պատճառի հայերը մեռցուցին ըսել
տարբեր բան է, երբ հայերը ապս-
տամբեցան, մահու-կենաց միջեւ
գտնուող թուրքերն ալ չափազանց-
եալ բռնութիւն ցոյց տալով շատ
հայ մեռցուցին ըսել՝ տարբեր բան
է»:

Ահա՛ թուրք հոգեբանութիւնը.
մի՛շտ իրաւացի ըլլալ:

Պետութիւնը Օսմանեան կայս-
րութենէն բաժնուած բոլոր քրիս-
տոնեայ ժողովուրդներուն հանդէպ
անուցած վրէժը հայերէն առած է:

Հայկական վտանգը աւելի
չմեծցած՝ Չախշախուելու էր:

Մեծ վեցիւր Քեմալի փաշա,
1878-ին, պուլկարներուն ներքին
անկախութիւն ստանալէն յետոյ,
«Ռումելիի մէջ մեր ծոցը օձ
անուցինք, պէտք է որ նոյն յիմա-
րութիւնը ընենք մեր ասիական
Տաճկաստանին մէջ: Խելացութիւն
է ջնջել, վերցնել բոլոր այն տար-
րերը, որոնք օր մը կրնան մեզ նոյն
վտանգին հետ դէմ-յանդիման բե-
րել», ըսած է:

Օսմանցիներ եւրոպական պե-
տութիւններու հետ կնքուած հա-
մաձայնութիւններով հայերու հա-
մար բարեկարգութիւններ խոս-
տանալով հանդերձ՝ գանոնք չգոր-
ծադրելու համար միջոցներ
փնտռած են: Ֆրանսացի Շոփել (A.
Schoppell) 1904-ին հրատարակուած
իր The reforms and the protection of
Christians in Turkey during 1673
until 1904 խորագրեալ գիրքին մէջ
ի մի հաւաքած է քրիստոնեաներու
պաշտպանութեան համար ստորագր-
ուած սուլթանական 645 հրամա-
նագրեր, ծանուցագրեր, դաշինք-
ներ, համաձայնութիւններ, շրջա-
բերականներ, որոնք երբեք լոյս
չեն տեսած:

Մեծն Բրիտանիա համոզուած
էր, որ Օսմանեան կայսրութիւնը
վերջնականապէս կը քայքայուէր:
Իր «Հնդկաստանի ճամբայ»-ի
ապահովութեան համար սուլթա-
նին հետ եղած գաղտնի պայմա-
նագրութեամբ մը,- 3 Մարտ 1878-
ին ստորագրուած Սան Ստեֆանոյի
դաշնագրէն երեք ամիս յետոյ՝ 4
Յունիս 1878-ին,- կը տիրանայ
Կիպրոս կղզիին՝ խոստանալով ար-
գելք ըլլալ արեւելեան նահանգնե-
րուն մէջ ռուսերու ազդեցութեան
զօրացման:

Մեծն Բրիտանիոյ ճնշումնե-
րով, 13 Յունիս 1878-ին, Սան
Ստեֆանոյի դաշնագրէն չորս
ամիս յետոյ, կը գումարուի Պեռլի-
նի վեհաժողովը, ուր ռուսերուն
Պալքաններու եւ արեւելեան նա-
հանգներուն վրայ ունեցած ազդե-
ցութեան վերջ կը տրուի: Սան
Ստեֆանոյի համաձայնութեան 16-
րդ յօդուածը,- ըստ որու ռուսա-
կան բանակին հսկողութեամբ պի-
տի կատարուէին բարեկարգութիւն-
ները,- կը փոխուի 61-րդ յօդուա-
ծի, եւ փոխանակ ռուս բանակի
ներկայութեան, բարեկարգումնե-
րու գործադրութեան հսկիչ կ'ըլ-
լան Եւրոպայի բոլոր պետութիւն-
ները՝ առանց ֆիզիքական ներկա-

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Ջարդերը

Շարունակուած էջ 15-էն

յուլիան:

Այս խմբային խոստովանումը առանձնապէս ոչ մէկ պետութեան պարտականութիւնը ու պատասխանատուութիւնն էր, ուստի հսկիչներէն ոչ մէկը հետապնդեց բարեկարգումներու գործադրութիւնը, որով այս յօդուածն ալ գործադրութեան չդրուած համաձայնութիւններու կարգին դասուեցաւ: Անգլիոյ՝ Անատոլոյի գլխաւոր դեսպան Ուիլիսոն (William Wilson) իր կառավարութեան զրկած 16 Յունիս 1880 թուակիր տեղեկատուութեան մէջ նշած է, թէ Թուրքիոյ վրայ Եւրոպայի հսկողութիւնը անհրաժեշտ է եւ բարեկարգումներու գործադրութեան համար ալ արտաքին ճնշումը հարկաւոր:

Սուլթան Համիտ «Կը մեռնիմ եւ սակայն Պեռլինի վեհաժողովի 61-րդ յօդուածը գործադրութեան չեմ դնէր», ըսած է: Մեծն Բրիտանիոյ վարչապետներէն Լոյտ Ճորճ (Lloyd George, 1916-1922) իր լուչերուն մէջ, ակնարկելով Պեռլինի վեհաժողովին, հետեւեալը գրած է. «Եթէ մեր չարաբաստիկ միջամտութիւնը չըլլար 1878-ին, Սան Ստեֆանոյի դաշնագրով հայերը կ'անցնէին ռուսերու պաշտպանութեան տակ: Հայաստան մեր գոհն է: Ռուսերը ստիպուած էին հեռանալու. դժբախտ հայերը նորէն ճգմուեցան զիրենք հինէն ի վեր կեղեքողներուն ոտքին տակ»:

Յառաջիկային, Իթիհատի թերթերէն «Թանին»-ի խմբագրապետ Հիւսէյն Ճահիթ «Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգներու բարեկարգութեան համար 61-րդ յօդուածին գործադրութիւնը մեզի համար անկարելի է, եւ երբեք չենք ներք այդ տեսակ խնդիրներով մեզ զբաղեցնողները», գրած է:

Թուրք կառավարութիւնը բուն ընդդիմութիւն ցոյց կու տար եւրոպական պետութիւններու պահանջներուն:

Սուլթան Համիտ վճռականօրէն որոշած էր Հայկական Հարցին վերջ տալ:

Պեռլինի վեհաժողովին՝ հայկական պատուիրակութեան տեղեկատուութեան ճշգրտած էր, որ օսմանեան հողամասերուն վրայ հայ բնակչութեան թիւը երեք միլիոն էր: Այդ թուականէն ետք, կարմիր սուլթանը հայաշատ նահանգներու սահմանները փոփոխութեան կ'ենթարկէ: Միջին հաշուով 100.000 քառակուսի քիլոմետր տարածութեամբ նահանգներուն տարածքը 35.000 քառակուսի քիլոմետրի կ'իջեցուի: Այս ձեւով ստեղծուած վարչական նոր քարտէսին վրայ հայեր փոքրամասնութեան կը վերածուին:

Երբ Գերմանիոյ Վիլհելմ Բ. կայսրը 1889-ի Նոյեմբերին Կ.Պոլիս կ'այցելէ, հայեր առիթէն օգտուելով՝ աղերսագրով մը իրեն կը յիշեցնեն, թէ Պեռլինի վեհաժողովին 61-րդ յօդուածը ցարդ գործադրութեան դրուած չէ: Հայերու այս արարքը սուլթան Համիտին գայրոյթ կը պատճառէ: Հայկական Հարցը լուծելու գաղափարը իր մէջ բոլորովին կ'արմատանայ:

1890-ին, քիւրտերով եւ բանտէն ազատ արձակուած յանցապարտներով կը կազմուին Համիտի շոկատները (Համիտի Ալայլարը): Անոնք իրենց շքանշանները կը ստանային սուլթանէն, իսկ եկա-

մուտնին՝ հայկական շրջաններու կողոպուտէն եւ թալանէն:

Երբ սուլթան Համիտ, 1891-ին, հունգարացի արեւելագետ Վամպերին (Vambery) տեսութիւն մը կը շնորհէ, անոր «Հայերու ձայնը կտրելու ձեւը գիտեմ, շատ մօտատենէն անոնք ծուկկի պիտի բերեն: ...Եւրոպան մեզմէ Ռուսմանիան ու Յունաստանը առնելով մեր ոտքերը կտրեց: Սերպիոյ, Պուլկարիոյ եւ Եգիպտոսի կորուստով մեր ձեռքերը կտրուեցան: Հիմա ալ Հայկական Հարցով կ'ուզեն մեր աղիքները խլել: ...Մենք մեր բոլոր գործութեամբը ատոր դէմ պիտի կենանք», ըսած է:

Այլեւս ջարդերը կը գործադրուին կանխապատրաստուած ձեւերով:

3 Յունիս 1896-ին կը սկսի



Օսմանեան դրամատունը (Պանք Օթոման)

«Վանի մեծ դէպքը»: Բանակը քաղաքի հայկական թաղերու պաշտպան տղամարդիկը քաղաքէն հեռացնելէ յետոյ, թէ՛ այդ տղամարդիկը եւ թէ՛ տեղացիներ կը ջարդէ: Հազարաւոր դիակներ շաբաթներով անթաղ կը մնան:

Մուշի, Վանի, Կարնոյ (Էրզրում), Խարբերդի (Էլազիզ) մէջ կեանքը անտանելի վիճակի կը հասցուի: Համիտի շոկատներուն կողոպուտները ու ոճրագործութիւնները անպատիժ կը մնան: Շրջանի պատասխանատուները մզկիթներու պատերուն վրայ յայտարարութիւններ կը կախեն, ուր կը կարդացուի. «Բոլոր մահմետականները պէտք է իրենց պարտականութիւնները կատարեն՝ հայերը մեռցնելով, անոնց տուները կողոպտելով եւ փլցնելով: Ոչ մէկ հայ պէտք է ողջ մնայ: Ասիկա սուլթանին հրամանն է: Անոնք, որոնք այս յայտարարութեան չեն հնազանդիր, պիտի նկատուին որպէս հայ եւ պիտի մեռցուին: Իւրաքանչիւր մահմետական այս հրահանգին հնազանդիլը ցոյց տալու համար՝ նախ պէտք է իր դրացի հայը մեռցնէ»:

1894-էն 1896, հայաբնակ նահանգներուն մէջ մօտաւորապէս 200.000 հայ կը ջարդուի, 100.000 կը մահմետականացուի, 100.000 կին ու աղջիկ կ'առեւանգուին եւ թուրքերու հարեմները կը տարուին: 100.000 հայ՝ Կովկաս, 60.000՝ Եւրոպա եւ Ամերիկա, 12.000 ալ Պուլկարիա կը գաղթէ:

Պատերազմական-նազմավարական տեսութիւններու համաձայն, կան փոքր պատերազմներ, մեծ պատերազմներ եւ ամբողջական պատերազմներ: Փոքր պատերազմներու պարագային, կանոնաւոր բանակը կը պատերազմի հայրուկներու եւ ֆետայիներու դէմ: Մեծ պատերազմները երկուքէ աւելի բանակներու եւ պետութիւններու պատերազմն է: Ամբողջական պատերազմը բնաջնջել է թէ՛

թշնամիին բանակը եւ թէ՛ անգէն բնակչութիւնը: Փրոսիական ռազմավարական տեսակէտին համաձայն, պատերազմ մը պէտք է ըլլայ ամբողջական պատերազմ: Օսմանեան կայսրութեան այդ շրջանին հայերու դէմ որդեգրած գործելակերպը փոքր պատերազմ էր, նաեւ ամբողջական պատերազմի ռազմավարութեամբ ալ՝ շրջան առ շրջան բնակչութիւնը բնաջնջել:

Օսմանեան կառավարութեան վարչապետութիւնները կեցնելու համար ոչ մէկ միջոցառումի դիմող եւրոպացիներու ու շարժումները գրաւելու նպատակով խուճաբ մը հայեր, 26 Օգոստոս 1896-ին, Կ.Պոլսոյ Ղալաթիոյ շրջանի Օսմանեան դրամատունը (Պանք Օթոման) կը գրաւեն: Օսմանեան դրամատունը հաստատուած էր 1862-ի Նոյեմբեր

Երբ 1880-ին օսմանցիներու պաշտպան հրեայ ծագումով Տիգրայէլի (Benjamin Disraeli) գլխաւորած Անգլիոյ Պահպանողական կուսակցութիւնը ընտրութիւնները կը կորսնցնէ ու Կլաւտոնի (William E. Gladstone) գլխաւորած Ազատականները իշխանութեան գլուխ կու գան, ու երբ Անգլիա 1882-ին Եգիպտոսը կը գրաւէ, երկու երկիրներուն միջեւ որոշ պաղովիւն մը ի յայտ կու գայ: Կիրպոսն ու Եգիպտոսը ի ձեռին, Անգլիոյ համար «Հնդկաստանի ձամբայ»-ն պաշտպանելու տեսանկիւնէն այլեւս Օսմանեան կայսրութիւնը իր արժէքը կը կորսնցնէ: Ազատագրուած պալքանեան երկիրներուն գորավիզ կանգնիլը իր շահերուն աւելի կը յարմարի:

Իր քաղաքական ազդեցութեան դաշտը ընդարձակել փորձող եւ առեւտրական նոր շուկաներ փնտռող Գերմանիան առիթէն օգտուելով՝ Օսմանեան կայսրութեան մօտեցում ցոյց կու տայ:

Գերմաններու թելադրութեամբ, մահմետական ժողովուրդներու Մեքքէ այցը դիւրացնելու նպատակով եւ բոլոր մահմետականներու նիւթական աջակցութեամբ կը ձեռնարկուի Հիճազի երկաթուղիին շինութեան: Գերմանական տնտեսական շահերու տեսակէտէն այս երկաթուղիին շինութիւնը չափազանց կարեւոր էր: Վիլհելմ Բ. կայսրը (Kaiser Wilhelm II), 1889-ի Նոյեմբերին, Կ.Պոլիս այցելութեան ընթացքին երկաթուղիին շինութեան մենաշնորհն ալ ձեռք կը ձգէ:

Փարիզի թերթերէն Temps-ի համաձայն, փանձերմենիք քարոզիչներէն Dr. Paul Rohrbach, 1913-ին, Պեռլինի մէջ գերման բարձրաստիճան ղեկավարութեան ուղղեալ դասախօսութեան մը ընթացքին ըսած է, թէ հայերը պէտք է տեղահանուին ու դէպի Միջագետք տարուին ու Պաղտատի երկաթուղիին շուրջ տեղաւորուին, որպէսզի այդ խոսքն տեղերը մշակուին եւ երկաթուղիին շինութեան բաժնետէր գերմանացիները կացութեան օգտուին: Dr. Paul Rohrbach, Վիլհելմ Բ. կայսրին թուրքերու հետ բարեկամութիւն հաստատելէն յետոյ, Փոքր Ասիոյ ու Միջին Ասիոյ թուրք ցեղերուն մասին ուսումնասիրութիւններ կատարած է եւ այն եզրակացութեան յանգած, որ այս բոլոր թուրք ցեղերը, ի շահ գերմանական ծաւալապաշտ քաղաքականութեան, պէտք է իրարու հետ կապուին, սակայն այդ միացման՝ այդ Թուրանի ճամբուն վրայ հայեր կը գտնուին: Ուստի երկիրն այս աշխատասէր ու գործունեայ տարրը պէտք է իր հայրենի հողերէն հեռացուի ու փոխադրուի երկաթուղիին շուրջ:

Օսմանեան բանակի արդիականացման, սպայից դպրոցին մէջ գերմանական ռազմավարական գիտութիւններ սորվեցնելու համար բարձրաստիճան գերման սպաներ գործի գլուխ բերուած էին: Իթիհատական սպաներէն շատեր գորավար Կոլցի (Colmer von der Goltz) աշակերտած, անկէ գերմանական վարդապետութիւնը լաւ մը սորված էին՝ հպատակ եւ տկար ազգ մը բունի աքսորել եւ ոչնչացնել: Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ այս վարդապետութիւնը կը գործադրուէր:

15-ին, անգլիական ու ֆրանսական դրամագլուխով: Կեդրոնը Փարիզ եւ Լոնտոն էր: Տնօրէնը ու տնօրէն խորհուրդը եւրոպացիներ էին:

Սուլթան Համիտ օգտուելով դրամատան դէպքէն, որու մասին իր լրտեսներուն միջոցաւ լուր ունեցած էր, արդէն իսկ Կ.Պոլիս բերուած Համիտի 500 քիւրտերը դանակներով ու փայտերով զինած՝ կը զրկէ հայկական թաղերուն վրայ՝ տուներն ու խանութները կողոպտելու եւ այդ մարդիկը սպաննելու հրամանով: Այս սարսափազու կացութեան առջեւ վեց մեծ պետութիւնները ստեղծուած վիճակին վերջ տալու պահանջով, 28 Օգոստոսին, կառավարութեան յուշագիր (Nota) մը կու տան: 10.000 այդ մարդ ջարդուելէ յետոյ, 31 Օգոստոսին անդորրութիւնը կը վերահաստատուի:

Ապտիլհամիտ հայերը տնտեսապէս ալ տկարացնելու նպատակով յատուկ օրէնքներ կիրարկելու տայ եւ զանոնք խիստ հսկողութեան ու քննութեան կ'ենթարկէ:

Երբեմնի «Միլլետ-ի սատրէպ» (հաւատարիմ ազգ) հայերը այլեւս կայսրութեան գլխաւոր թշնամին էին: Հայկական Հարցը այժմ եղած էր Օսմանեան կայսրութեան լինելու կամ չլինելու հարցը: 1908-ի սահմանադրութեան հռչակումը երկիրն միասնականութիւնը ապահովելու տեսակէտէն սպասուած արդիւնքը չէր տուած: Փանօսմանեան քաղաքականութիւնը այլեւս սնանկացած էր: Կայսրութիւնը փլուզումէ փրկելու համար նոր միջոցներ պէտք է փնտռուէին: Թերթերու մէջ կը սկսին երեւալ Փանիսլամիզմի, Փանթուրանիզմի, Փանթուրքիզմի տեսութիւններով յօդուածներ: Էնվեր անձամբ կը գլխաւորէ թուրք երիտասարդական շարժումը՝ «Պոզուրթ»-ները: Սուլթան Համիտ յաճախ կը յիշեցնէ, թէ ինք 300 միլիոն իսլամին խալիֆան՝ կրօնապետն է:

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Ջարդերը

Շարունակուած էջ 14-էն

Վիլհելմ Բ. կայսրը, 1898-ին, անգամ մը եւս Կ.Պոլիս կու գայ ու գանազան քաղաքներ այցելելով մինչեւ Երուսաղէմ կ'երթայ: Ճամբան, Դամասկոսի ալ-Մարժա (al-Marja) հրապարակին վրայ, սուլթան Սալահատինի դամբարանին առջեւ, մասնատականները սիրաշահելու համար կը յայտարարէ, թէ ինք սուլթան Համիտը որպէս խալիֆա յարգող 300 միլիոն մասնատականներուն բարեկամն է:

Մինչ այդ հայերու ջարդը կը շարունակուի: Տեղացի ժողովուրդները զինելով՝ հայերու վրայ յարձակումի կը դրկուին: Ջարդարարները կա՛մ անպարտ կ'արձակուին եւ կամ չնչին պատիժներու կ'ենթարկուին:

Մեծ յոյսեր ներշնչած Իթթիհատականներու յեղափոխութենէն միջոց մը յետոյ, 14 Ապրիլ 1909-ին, Ատանայի կոտորածը տեղի կ'ունենայ: 30.000 հայ կը ջարդուի: Մերսինի նաւահանգիստը խարսխած անգլիական ու ֆրանսական նաւատորմերու հրամանատարները 24 Ապրիլին Ատանա կ'երթան ու հարցերուն պատասխանատու նկատուող նահանգային կառավարիչին հետ կը տեսնուին: Երիտթուրքերը կ'ամբաստանեն հայերը՝ օտարները Օսմանեան կառավարութեան ներքին գործերուն միջամուխ ընելու յանցանքով:


Կիլիկիոյ հողը շատ արգասաբեր է: Զանազան պտուղներ, ցորեն, գարի, բամպակ առատորէն կ'աճին: Կոտորածները կ'ըլլան հունձքի շրջանին: Հունձքը կա՛մ կը թալանուի եւ կամ ալ կը փճացուի՝ շրջանի տնտեսական վիճակն ալ միասնաբար փճացնելով:

Քննութիւններ կատարելու համար խորհրդարանէն կը դրկուի երկու երեսփոխան՝ մին թուրք, միւսը հայ: Քննիչ յանձնախումբին հայ անդամը՝ Պապիկեան էֆենտի, Կ.Պոլիս վերադառնալէ յետոյ, իր տեղեկագիրը չներկայացուցած կը մեռնի, գուցէ կը սպաննուի: Թուրք երեսփոխանին պատրաստած տեղեկագիրը կ'ըլլայ ի նպաս թուրքերու:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը՝ Stephen Pichon, 17 Մայիս 1909-ին երսփոխանական ժողովին կը տեղեկացնէ, թէ յարձակումներուն առաջը առնելու համար դրկուած զինուորական շուկատներն ալ 30.000 հայու ջարդին մասնակցած են: Յաջորդ օր, Փարզի օսմանեան դեսպանը թերթերու դրկած յղուածին մէջ կը յայտարարէ, թէ մեռեալներու թիւը միայն 4.000 է: Ցեղասպանութենէն վերջ ալ, երբ ամէն մարդ մէկուկէս միլիոն հայ մահացած է կ'ըսէր, երբ նոյնիսկ Թալէաթի տուեալներով ատիկա 900.000 էր, հանրապետականները յամառօրէն 400.000 թուանշանին վրայ կը կենան: Եթէ թիւը փոքր է, ուրեմն ցեղասպանութիւն չէ եղած:

Մեծ կայսրութիւն մը ըլլալու փափաքը երբեք չէ կորսուած: Այդ տենչանքը միշտ վառ է, բայց Եւրոպայի մէջ կորսնցուած հողերու վերագրաւումը անկարելի է: Հետեւաբար աչքերը կը դառնան դէպի արեւելք, դէպի Միջին Ասիա: Զարկ կը տրուի Փանթուրանական գաղափարախօսութիւններուն: Թուրան նկատուած երկրին սահմանները պիտի տարածուէին մինչեւ հոն, ուր արդէն թրքերէն լեզուն տա-

րածուած էր: Թուրանի քարոզիչ Միւնիս Թեքինալի (Մորգ Քոնէն անունով հրեայ մը), Թուրանի իրականացման համար երկու ծրագիր կը ներկայացնէ: Առաջին իրականացումը աւելի դիւրին «Փոքր Թուրան»-ն է, որուն սահմաններն են արեւմուտքէն՝ Կ.Պոլիսը, արեւելքէն՝ Պայքալ լիճը, հիւսիսէն՝ Միջին Ասիոյ Քազան քաղաքը, եւ հարաւէն՝ Մոնկոլիան: «Փոքր Թուրան»-ին պիտի յաջորդէ «Մեծ Թուրան»-ը՝ ձափոնէն մինչեւ Սքանտինաւեան լեռները, Հիւսիսային ովկիանոսէն մինչեւ Թիպեթի բարձունքները:



ԱՍՏ դեսպան Հենրի Մորկընթաու

Հայերը Թուրանի ճամբուն վրայ էին: Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան 1910-ին Սելանիկի մէջ կայացած համագումարին կ'ընդունուի գաղտնի բանաձեւ մը, ըստ որում կայսրութիւնը պէտք է դառնայ գոլտ թրքական պետութիւն մը՝ քրիստոնէսէն ոչ-թուրք տարրերու ոչնչացման միջոցաւ: Յատկապէս հայ ազգը պէտք է արմատախիլ ըլլայ, անհատ մը իսկ պէտք չէ մնայ: Հայ անունը պէտք է մոռցուի: Թուրք տարրը օսմանցի ալ տար-

րերուն վրայ պէտք է տիրապետող դառնայ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաու (Henry Morgenthau), 1913-1916, իր յուշերուն մէջ կը գրէ. «Ըստ Երիտթուրքերուն, եթէ Օսմանեան կայսրութեան ղեկավարութիւնը իր գրաւած երկիրներու քրիստոնէաները ջարդած ու այդ տեղերը մեծ թիւով թուրքեր տեղաւորած ըլլար, Պուլկարիա, Սերպիա, Ռումանիա այսօր ձեռքէ ելած պիտի չըլլային»:

Եւրոպայի Համաձայնական Պետութիւններուն դէմ կայսրութեան մասնատական ժողովուրդներուն միասնականութիւնը ապահովելու նպատակով ալ կը դիմուի Փանիսլամիզմի:

Փանիսլամիզմը գերման ծաւալապաշտական քաղաքականութեան համար շատ յարմար միջոց մըն էր: Մահմետականներու միասնականութիւնը առիթ պիտի տար, որ Համաձայնական Պետութիւններու գաղթավայրերու մահմետականները անոնց դէմ ապստամբէին ու պետութիւնները ապստամբութիւնները զսպելու համար այդ վայրերը յաւելեալ բանակներ պահէին՝ տկարացնելով իրենց եւրոպական բանակներուն ուժը: Գերմանիա, որպէս իսլամներու պաշտպան, Փանիսլամիզմէն տնտեսապէս ալ պիտի օգտուէր: Իր արտածման քանակը դէպի այդ երկիրներ պիտի բարձրանար:

Իթթիհատ վէ Թերաքքին, իր գաղափարախօսութիւնը պատրաստող Զիա Կէօքալիի եւ անոր գաղափարակից ընկերներուն օգնութեամբ, կը հաստատէ գանազան թրքական միութիւններ՝ Թիւրք Տերնեղի, Թիւրք Եուրտու, Թիւրք Օճաքը, որոնց հրատարակած պարբերաթերթերուն մէջ կը քարոզուին թրքացում, մահմետականացում եւ օտարներու խանութներէն

առեւտուր չկատարել:

23 Յունուար 1913-ին, Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութիւնը Պապը Ալին (Բարձր Դուռը) կը պաշարէ ու կառավարութիւնը հրաժարելու կը ստիպէ: Նոյն օրը, կուսակցութեան ենթակայ նոր կառավարութիւն մը կը կազմուի. Մահմութ Շեֆքեթ փաշա՝ «սատրագամ» (վարչապետ), Թալէաթ՝ ներքին գործոց նախարար:

Երիտթուրքերը մինչեւ այդ թուականը ազատութիւն, ժողովուրդներու եղբայրութիւն, հաւասարութիւն, ժողովրդավարութիւն կը քարոզէին: Իշխանութեան տիրանալէ յետոյ դարձան սանձարձակ բռնակալներ եւ ջարդարարներ:

1913-ի Ապրիլին սկեալ քիւրտ ցեղախումբեր հայերը սպաննելու, անոնց ունեցած թալանելու, հողերը գրաւելու շարագործութեան նոր թափ մը կու տան:

Եւրոպայի քաղաքական վիճակը հասած էր աշխարհամարտի մը նախօրեակին: Որեւէ պատճառ կրնար պատերազմի տեղի տալ: Այդպէս ալ կ'ըլլայ: Աւստրահունգարական կայսրութեան գահաժառանգ Archduke Franz Ferdinand-ին, 28 Յունիս 1914-ին, Պոսնիայի մէջ սերպերու կողմէ սպանութիւնը կ'ըլլայ դրդապատճառը:

Իթթիհատականներուն համար գերմանացիներու կողքին Համաձայնականներուն դէմ պատերազմի մասնակցիլը հին հաշիւները մաքրելու, տրուած մենաշնորհներէն (Capitulation) եւ իրենց Ֆրանսայի ունեցած պարտքերէն ազատելու լաւագոյն միջոցն էր: Պատերազմը Փանթուրանիզմը կամ Փանիսլամիզմը իրականացնելու ամենալարմար առիթն էր: Հայկական Հարցը վերջնականապէս լուծելու լաւագոյն պատեհութիւնն էր:

(Շարունակելի-2)

American Red Cross

Thanks for always showing up!

Blood Drive
Armenian Educational Benevolent Union Pasadena

Held in AEBU Hall
 1060 N Allen Ave
 Pasadena, CA 91104

Saturday, April 30, 2022
10:30 a.m. to 4:30 p.m.

Please visit RedCrossBlood.org and enter sponsor code: AGC to schedule an appointment.

Streamline your donation experience and save up to 15 minutes by visiting RedCrossBlood.org/RapidPass to complete your pre-donation reading and health history questions on the day of your appointment.

Schedule a blood donation appointment today:
 Download the Blood Donor App | RedCrossBlood.org | 1-800-RED CROSS | 1-800-733-2767

AGC
 Armenian Genocide Committee

Ազնուասիրտ Տաղանդաւոր Երգչուհի Էլլադա Չախոյեան (Նովել՝ Ծննդեան Տարեդարձի Առթիւ)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ



1978 թուականի մայիսեան սքանչելի չորս օր վեներտիկի Ս. Ղազար կղզում, մեր ողջ ընտանիքով հիւրընկալուելուց յետոյ, յաջորդ երթուղին Միլանն էր: Հոգեւոր հայրերը դժկամութեամբ համաձայնուեցին մեր կողմից իրենց հետ չնախաճաշելու առաջարկութեանը: Առաւօտ կանուխ դիւրին էր Սուրբ Մարկոսի հրապարակի ճաշարաններէն որեւէ մէկում վեց հոգու համար ազատ սեղան գտնելը նախաճաշի համար::

Փառայեղ նախաճաշից յետոյ ձեպընթաց գնացքը մեզ հասցրեց Միլան, ուր, տեղի Հայ Տուն Միութեան միջոցով յոյս ունէի հիւրանոց ապահովել, որովհետեւ, ինչպէս մեզ դժուարացրին վեներտիկի Սուրբ Հայրերը, Շաբաթ օրերին գրեթէ անհասար էր Միլանում հիւրանոց գտնելը:

Միլանի երկաթուղային կայարանի բազմաթիւ կրպակներից մէկի միջոցով հնարաւոր եղաւ գտնել Հայ Կենտրոնի հասցէն: Բայց ինչպէս գնալ այնտեղ: Մի կրպակի առջեւ խմբուած, որոշում էինք մեր անելիքը, մեզ մօտեցաւ մի յաղթանդամ, կոկիկ յագնուած մի տղամարդ եւ իտալերէնով դիմեց հայրիկիս:

Որեւէ օգնութեան պէտք ունէ՞ք, կարող եմ օգնել:

Ասացէք ինչպէս, ինչպէս կարելի է գնալ Հայ Կենտրոն, հարցրեց հայրիկս:

Դուք այստեղ սպասէք ինձ, տեղ չգնաք, ես հիմա կը վերադառնամ:

Վայրկեաններ անց, անծանօթը մօտեցաւ մեզ ու իւրաքանչիւրիս տուեց գետնուղու (մետրօ) մուտքի տոմսակ: Ես փորձեցի վճարել, սակայն անծանօթ բարերարը կտրականապէս մերժեց:

Երկու կանգառ յետոյ կ'իջնէք, որեւէ մի կրպակի աշխատող ձեզ կը բացատրի ինչպէս գնալ Հայ Մշակուցի Տուն:

Մենք չհասցրինք շնորհակալութիւն յայտնել ակնյայտօրէն շտապող բարեկամին:

Կրպակի առջեւ նստած ծերուկը իմ անգլերէնով տրուած հարցին պատասխանեց.

Օ՛, Արմենիէն սե՛նթըր..., այ կան պուովայդ յու (ես ձեզ կարող եմ ուղեկցել):

Հայրս ու անծանօթ իտալացին մեր առջեւ ընկած, իտալերէն գրուեցնելով, մեզ առաջնորդում են Հայ Տուն: Ճանապարհին, մի հրապարակով անցնելիս, հայրիկս ասաց.

Այս հրապարակում են 1945 թուականին ոտքերից կախել Մուսսոլինիին:

Բախտաւորութիւն էր, որ մենք Շաբաթ օրն էինք յայտնուել Հայ Տանը, որովհետեւ, ինչպէս ասացին, կենտրոնում շաբաթուայ մնացեալ օրերին մարդ չի լինում այնտեղ:

Կենտրոնում, քսանի հասնող հայորդիներ, առանձին խմբեր կազմած ժամանակ են սպանում: Ոչ մի միջոցառում: Մեզ էլ, ինչպէս ասում են՝ «բանի տեղ» դնող չկայ: Մի քանի հոգի մօտենում են, հետաքրքրուում, թէ ով ենք, ինչ ենք, ինչ ենք անում Միլանում: Ես ասում, հասկացնում եմ, որ ոչ մէկը չունենք Միլանում, սակայն կ'ուզէինք մէկերկու օր ման գալ, Լա Սկալա գնալ, ո՞ւմ ես ասում՝ ոչ մի արձագանգ:

Արդէն երկու ժամի չափ մի կերպ տեղաւորուել ենք սրահի այս ու այնտեղ, բայց մեզնով զբաղուող չկայ: Անսպասելի մօտենում է մի քառասունին մօտ տղամարդ..

Ինծի ըսին, որ դուք երաժիշտ էք, դաշնակ կը նուագէ՞ք, եթէ այո, կրնա՞ք քանի մը կտորներ սորվեցնել ինձի «Անուշ» օպերային, առանց իմ համաձայնութիւնն առնելու՞ դաշնամուրի նոտակալի վրայ դրեց օպերայի նոտաները:

Բայց պարո՞ն, ես ընտանիքիս հետ եմ, ժամանակինս շատ սուղ է, եւ մենք չենք գիտեր թէ ուր, որ հիւրանոցը պիտի մնանք այս գիշեր, օրն ալ լըմընալու վրայ է: Եթէ կը խոստանաք, որ մեզի կ'օգնէք գիշերելու տեղ գտնալ՝ սիրով, ինչո՞ւ չէ:

Ադ բան մը չէ՞ ձանրմ, ասելն ու «Աղջի Անաստուած» բացելը մէկ եղաւ:

Մինչ մենք փորձ էինք անում, յարակից սենեակից ելումուտ էին անում մի ձեռքին սանդուխ, միւսին կոկա բռնած շքեղ հագուստներով ու ապարանջաններով պճնուած տիկիներն ու պարոնները, իսկ իմ խեղճերը, իմ հրամանին էին սպասում: Ոչ ոք, ոչ մէկը չնկատեց անգամ երկու փոքր տղաներիս ներկայութիւնը: «Սրանք են Եւրոպայի հայերը», ասում եմ ինքս ինձ ու մեղադրում, որ ինքնակոչ «հիւրի» վիճակում յայտնուելով այդ կենտրոնում, ակամայ՛ստորացրի նաեւ ծնողներին:

Գրեթէ երկու ժամ խլեց մեզնից այդ վայերգիչը: Մէկ էլ տեսանք, որ ամէն մարդ կամացկամաց լքում է կենտրոնը: Մնացել ենք մենք ու մի չորսհինգ հոգի:

Դուք ո՞ւր պիտի երթաք, կեղրոնը պիտի գոցենք, արդէն ժամը եօթն է, ասում է կարմիրից էլ կարմիր շրթունքներով տիկինը:

Շիտակը՝ մենք ալ չենք գիտեր թէ ուր պիտի երթանք, որ հիւրանոցը, ասում եմ ես, քիչ առաջուան երգիչը, անունն ալ չենք գիտեր, խոստացաւ մեզի օգտակար ըլլալ..., ո՞ւր է, մէջտեղ չի կայ:

Ինչ երգիչ, ձանրմ, իսկ ինչ մէկն է..., գնաց, քիչ առաջ դուրս ելաւ:

Ինչպէս թէ գնաց, ես երկու ժամ կորանցուցի իրեն համար, մինչ ընտանիքս քանի ժամ է հոս անօթի-ծարաւ իմ որոշումիս կ'սպասէ:

Ինչ կրնամ ըսել պարոն, գէշ բան է ըրածը, սակայն, պիտի գոցենք սրահը: Ինչ կը վերաբերի հիւրանոց գտնալուն՝ շաբաթ օրով Միլանի մէջ՝ անկարելի է, որ գտնաք, նախապէս պատուիրելու էիք, եւ, ինչպէս կը տեսնամ՝ բազմ

մանդամ ընտանիք էք: Կրնա՞նք այս գիշեր հոս, կեղրոնին մէջ մնալ:

Ո՛չ, ինչ կ'ըսէք պարոն, ատանկ բան անկարելի է, օրէնքի խախտում է:

Ինչո՞ւ է անկարելի, ո՞վ պիտի գիտնայ..., դուռը վրանիս գոցեցէք եւ գացէք, ասկէ դիւրին բա՞ն, փորձում եմ գուժի զգացում արթնացնել դիմացինիս հոգում:

Կը կրկնեմ պարոն, մենք չենք կրնար արտոնել, որ հոս մնաք:

Քար լուծի՞ր: Ոչ մի արձագանգ: Նոյնիսկ կնոջ կողքին կանգնածներն էլ են լուռ:

Եւ դուք պիտի թոյլ տաք, որ այս պատկերներուն հետ փողոցը մնանք, սա էլ հայրս է, որ մինչ այդ լուռ հետեւում էր անցուղարձին ու մեր խօսակցութեանը:

Ձգէ պէ՞, ձգէ Յակոբ, արցունքն աչքերին խօսքի մէջ մտաւ մայրիկս, ասանկ հայեր ալ կան եղբր:

Դարձեալ ոչ մի պատասխան: Միլանահայերը կամացկամաց շարժուեցին դէպի ելքի դուռը, հայեացքներով հասկացնել տալով, որ իրենց հետեւենք: Դրսում, արդէն մայթի վրայ, տեսնելով մերոնց խեղճացած, անհուսալի վիճակը, մի տեսակ երկնային ուժ իջաւ ուսերիս, Հենրիկ, ուշքի արի, ընտանիքիդ ոգին բարձրացրու,

Հը՛, ինչ էք սառած, սմբած տեսք ընդունել: Կեանքը պայքար է, չէ՞, ձեզ թափ տուէք: Գիտեմ, անօթի էք, ծարաւ, մի քիչ էլ դիմացէք: Ես արդէն ճշդեմ եմ: Լա Սկալան շատ մօտ է: Գնանք դիմացի մայթը: Կը հարցնենք թէ, ո՞ր տրամվայն է Լա Սկալա գնում: Ես գիտեմ, որ մեր ընկերուհի, տաղանդաւոր երգչուհի էլլադա Չախոյեանը Լա Սկալայում է կատարելագործւում: Կը գտնենք նրան, վստահ եմ՝ նա մեզ կ'օգնի:

Իսկապէս էլ, շատ մօտ էր օպերային թատրոնը: Կենտրոնական մուտքի աշխատողն ասաց, որ վերապատրաստման համար Սովետական Միութիւնից եկած արտիստները ժամը ութին դուրս են գալիս վեցերորդ մուտքից, գնացէք եւ սպասէք այնտեղ, շատ յարգալից բացատրեց դուստրուսը:

Ամէն ինչ մոռացուեց: Յոյս էր ծագել..., ա՛յ այդ ՅՈՅՍԸ, ինչ կարեւոր զգացում է Աստուած իմ, ինչպէս ես Դու մեզ օգնում ու ճիշդ ուղիով առաջնորդում:

Իսկապէս էլ, ճիշդ ժամը ութին, վեցերորդ մուտքից դուրս ելաւ մեր հրաշք էլլադա Չախոյեանը՝ չորս երիտասարդ երգիչներին հետ: Մեզ տեսնելուն պէս՝

Մարիետա՛, Հենրիկ..., էս ո՞րտեղից, ո՞նց յայտնուեցիք այստեղ..., աչքերիս չեմ հաւատում:

Մարիետան եւ ես, իրար հերթ չտալով ամէնայն մանրամասնութեամբ պատմեցինք ամբողջ օրուայ անցածդարձածի մասին:

Մի հարցում են նրանք ճիշդ եղել: Անհնար է հիւրանոցներում տեղ գտնելը, էն էլ՝ շաբաթ օրով, մնացածը՝ մոռացէք..., դաւա՛յ, դաւա՛յ պաշլի (ուսերէն է՛հայտէ, հայտէ՛ գնացինք), հո ձեզ փողոցում չե՞մ թողնելու: Մի րոպէ սպասէք այստեղ, ես տղաների հետ մի երկու խօսք փոխանակեմ ու գամ, ասաց էլլադան ու գնաց նրանց մօտ:

Չգիտեմ տղաների հետ ինչ խօսեցի՞խօսեց, բայց բոլորս մէկտեղ շարժուեցինք դէպի տրամվայի կան-

գառ: Ընդամէնը՝ մէկ կանգառ՝ եւ մենք հիւրանոցի առջեւում ենք:

Մտէք, մտէ՛ք, բոլորը մեզ գիտեն: Երկու ամիս է՝ այստեղ ենք ապրում: Տեղաւորուէք ինչպէս հարմար էք գտնում, իսկ որեւէ բան կերե՛լ էք, ճաշե՛լ էք:

Տեսնելով, որ ոչ մի պատասխան չկայ մեր կողմից, էլլադան ամէն ինչ հասկացաւ:

Ես բարձրանամ վերեւ, իմ սենեակ, հագուստներս փոխեմ ու իջնեմ, իսկ մինչ այդ, կառավարիչը ձեզ կ'ասի հիւրանոցի վիճակի մասին:

Երիտասարդը հայրիկիս ասել էր, որ հիւրանոցում միայն երկու ազատ սենեակ կայ, որոնք պահուած են անսպասելի բարձրաստիճան հիւրերի համար, եւ որ դրանք մինչեւ ժամը տասներկուսը չեն կարող զբաղեցուել պատահական հիւրերով:

Եթէ մինչեւ այդ ժամը որեւէ մէկը չգայ, ձեզ կը տրամադրենք այդ սենեակները, ասել էր երիտասարդը:

Քիչ անց երեւաց էլլադան՝ ուկրաինացի երգչի հետ: Երկուսն էլ բեռնաւորուած էին ուտելիքներով ու սառը խմիչքներով:

Մարիետա Չան, այս է ամէնը ինչ որ կար մեր սենեակներում: Շաբաթ օրերին ոչ մի խանութ բաց չի լինում, գոհացէք այն ամէնով, ինչ որ կար մեր սենեակներում:

Հենց հիւրանոցի նախասրահի սեղաններից մէկի վրայ «սեղան գցեցին» էլլադան եւ Մարիետան: Մենք՝ սոված գայլերի պէս յարձակուեցինք ուտելիքների վրայ: Խեղճ երեխաներս չգիտէին ինչ վերցնել՝ հաց, պանիր, երշիկ, լոլիկ: Հացը քիչ եկաւ: Իտալացի գործավարը հեռուից, աչքերը յառած մեզ վրայ, ժպտուն երեսով հետեւում էր մեր հացկերոյթին եւ, նկատելով, որ հացը քուլթիւն արեց, չգիտես որտեղից մի խոշար հաց բերեց ու դրեց մեր սեղանին:

էլլադա Չան, դու գնա՛ հանգստացիր, մեղք ես, ասում եմ երգչուհուն:

Ինչ ես ասում, Հենրիկ, ես ինչպէս կարող եմ գնալ ու հանգստանալ, երբ դեռ յայտնի չէ, թէ ինչ է լինելու ձեր վիճակը: Երեխաներին մի կերպ տեղաւորի բազմօցների վրայ, մեղք են, իսկ ես գնամ տեսնեմ՝ նորութիւն կա՞:

Ակամայ չիչեցի, որ օրեր առաջ, երբ հեռաձայնել էի Պոլսի (Ստամբուլ) իմ բարեկամ Մարտիրոս Բալըքճեանին ու նրան յայտնել, որ մի շաբաթով պտոյտի ենք դուրս գալու Հռոմից: Նա ասել էր որ, եթէ Միլանում լինենք ու ինչ որ բանի կարիք ունենանք, կարող ենք դիմել Մանուկ անունով ընկերօջը: Եթէ դրամի էլ պէտք ունենաք՝ դարձեալ դիմեցէք նրան: Գրիոր հեռաձայնի թիւը, ասել էր նա:

Խնդրանքիս ընդառաջելով, էլլադան հեռաձայնեց ու լսափողը փոխանցեց ինձ:

Հենրիկ, դո՞ւն ես, ո՞ւրտեղէն կը հեռաձայնես:

Այո՛, այո Մանուկ, ես եմ, դուն գիտ կը ճանչնա՞ս:

Այո, այո՛, շատ լաւ գիտեմ, քու բախտէ՞ք Մարտիրոսին եղբայրը՝ Օննիկը հոս է: Երեկ եկաւ Պոլսիսին:

Ինչ բախտաւորութիւն, Աստուած իմ: Իմ լաւ բարեկամս է Օննիկը, փառաւոր օրեր անցուցած

Ազնուասիրտ Տաղանդաւոր Երգչուհի Էլլադա Չախոյեան

Շարունակուած էջ 16-էն

ենք միասին Գընալը կղզիին մէջ: Հաճիս, հեռաձայնին թիւը գիտ թորանցէ:

Միրով, եկած է նաև գնելու՝ Գընալը կղզիին ջուրերուն մէջ պտոյտի ելլելու համար:

Անմիջապէս կապում եմ Օննիկի հետ ու փոխանցում հիւրանոցի անունը՝ Բերնա:

Ո՞ր շրջանն է Հենրիկ, գիտե՞ս:

Ո՞ւր կէ պիտի գիտնամ եղբայր, մենք միայն կէսօրին հասանք Միլան: Այնքան գիտեմ, որ Լա Սկալային մօտ է:

Լաւ, հասկցայ, մէկ ժամէն հոն կըլլամ:

Օննիկ ջան, դու չես հոգ մի ընեք, արդէն ուշ է, վաղը առտու կը հանդիպինք:

Լաւ, կը նայինք, ասաց Օննիկը եւ ընկալուէր կախցի:

Շատ գնացեկաւ էլլադան աշխատողի մօտ, որին կարողացաւ համոզել, որ 12ը չ'եղած մեզ տրամադրեն սենեակները: Երեխաներս արդէն քնել էին բազմոցների վրայ:

Հենրիկ, եղաւ, համոզեցի: Միայն թէ դուք այդքան դրամ ունէ՞ք...

Այսինքն ո՞րքան, ամաչելով հարցրի ես:

Իւրաքանչիւր սենեակը երկու հարիւր դոլար է՝ մէկ գիշերուակ համար:

Մարտուռը պատեց մարմինս, չորս հարիւր մեծ գումար էր իմ ընտանիքի համար:

Իսկ թոյլ կը տա՞ն մէկ սենեակում տեղաւորուել, ամաչելով հարցրի ես:

Սպասիր գնամ հարցնեմ, ասաց շուարուն վիճակի մատնուած էլլադան:

Երկար մնաց էլլադան երիտասարդի մօտ, բայց վերադարձաւ ժպտուն դէմքով:

Եղա՛ւ, եղաւ Հենրիկ, մարդիկ հասկացան ձեր վիճակի լրջութիւնը: Երկու սենեակի համար կը վճարէք երկու հարիւր դոլար: Հը՛, ինչպէ՞ս է:

Հիանալի՛ էլլադա ջան, մենք երբեք չենք մոռանալ քո նուիրումը մեր ընտանիքին:

Երկու լիւքս սենեակներն էլ կողքկողքի էին: Այնքա՛ն հոգնած ու հոգով տառապած էինք որ, շքեղ լոգարանից օգտուելու պահանջն ու հաճոյքը թողինք գալիք առտուան: Երեխաներին տեղաւորելուց յետոյ, մեծերս նստեցինք ընտանեկան «ժողովի»:

Ճիշդ են ասում չէ՞, երբ «Աստուած մի դուռ փակում է՝ միւսն է բաց անում»: Հիմա ճիշդ եւ ճիշդ մեր պարագան է: Հայ Մշակոյթի Տան մարդկանց անխիղճ, անհոգի վերաբերմունքին յաջորդեց էլլադայի մարդկային ազնիւ վերաբերմունքը: Եւ յետոյ էլ յայտնուեց մեր ընտանիքին ուղնուճուճով նուիրուած Մարտիրոսի եղբայր Օննիկը:

Ի՞նչ ես կարծում հայրիկ, շարունակում եմ ես, դու աւելի փորձառու ես, ինչոր անտեսանելի ուժեր չե՞ն կառավարում մեզ:

Ճիշդ ես տղաս, կարծում եմ, նման երեւոյթները կարելի չէ վերադարձնել պատահականութեանը, Նախախնամութիւնն է մեզ կառավարում, իսկ Տէ՛ր էլ վերեւից հսկում է մեր գործողութիւններին:

Լաւ, հիմա գանք վաղուակ մեր անելիքներին: Եկել, հասել ենք

Միլան, աշխարհի բոլոր երաժիշտների, երգիչերգչուհիների, ի վերջոյ՝ արուեստասէրների քաղաքը, բա ես ու Մարիետան մի ներկայացում չգիտե՞մ: Ուրեմն այսպէս: Առաւօտեան Օննիկը կը գայ, կը խնդրենք նրան մեզ մի քանի ժամ ման տալ քաղաքում: Կը գնանք նշանաւոր Բագիլիկան, կը դիտենք Լեոնարդօ Դա Վինչիի նշանաւոր «Խորհրդաւոր ընթրիք» որմանակարը, որը պատկերում է Քրիստոսի վերջին ընթրիքը տասներկու առաքեալների հետ: Երեկոյեան ես ու Մարիետան կը գնանք Լա Սկալա, որից յետոյ՝ կայարան՝ Հռոմ վերադառնալու համար: Հը՛, պապա, ճիշդ չե՞մ ասում:

Ի՞նչ ասեմ տղաս, դու ամէն ինչ մտածուած ես անում: Ես երբեք չէի կարող երազել, որ այսքան հաճելի օրեր եմ ունենալու իմ պատանեկութեան երկրում: Ամէն քայլափոխի ես վերապրում եմ իմ երիտասարդութիւնը:

Մեր ընտանեկան «ժողովն» աւարտուելու վրայ էր՝ յայտնուեց Օննիկը:

Աս ինչո՞ւ պառկած չէք այս ժամուն, ասաց նա՝ առանձինն փաթաթուելով իւրաքանչիւրիս հետ, Հենրիկ, եկուր մեծերուն հանգիստ ձգենք եւ մենք իջնանք սրճարան: Առաւօտեան ժամը երեքին բաժանուեցինք միմեանցից՝ ժամը տասին հանդիպելու որոշումով:

Տասին քառորդ մնացած, ես արդէն ներքեւում էի, որպէսզի վճարումս անեմ:

Դուք պարտք չունէք պարոն, աւելին՝ այսօրուակ համար էլ է վճարուած, երջանիկ ժպիտը դէմքին, ասաց նախորդ օրուակ ծանօթ երիտասարդը:

Ի՞նչպէս թէ վճարուած է, ո՞վ է վճարել, գուցէ թիւրիմացութիւն է:

Ո՛հ, ո՛չ պարոն, դուք հանգիստ եղէք, ձեր բարեկամն է վճարել... նայէ՛ք, գալիս է, ձեռքով ցոյց տալով մուտքի կողմը, ասաց նա:

Ո՞ւր են ձերինները, ջերմօրէն գրկելով ինձ, ասում է Օննիկը: Հիմա վար կ'իջնան: Ես եկայ հաշիւներս մաքրելու՝ տեսայ որ չարութիւն ըրեր ես:

Է՛, օր մը միասին չ'անցուցե՞մք: Ես լաւ գիտեմ Միլանը: Գիշերն ալ, եթէ տոմսակ գտնանք՝ քեզի եւ տիկինիդ օպերա կը դրկենք: Յաջորդ օրը՝ խնդրեմ, կրնաք Հռոմ վերադառնալ: Հիմա ձեզի անանկ աղուոր նախաճաշի տեղ մը պիտի տանիմ, որ երբեք չմոռնաք:

Այն է՝ պատրաստուում էինք հիւրանոցից դուս գալ՝ յայտնուեց էլլադան:

Էս ո՞ւր ժողովուրդ: Գնում էք առանց հրաժեշտ տալու՞, զարմացած հարցրեց նա:

Ձէ, չէ՛ էլլադա ջան, մէկ գիշեր էլ ենք մնալու, մեր բարեկամը այդպէս կամեցաւ, եւ, ասեմ, բոլոր հարցերը լուծել է... հիմա եկ միասին գնանք նախաճաշի, ասաց Մարիետան, այո՛, այո՛ օրիորդ, միացէք մեզի, միանգամայն լուրջ աւելացրեց Օննիկը:

Միրով կ'ուզէի միանալ ձեզ, բայց չեմ կարող, ժամը 11ին պարապմունք ունենք: Դուք էլ՝ երեւի ամբողջ օրը դրսերում էք լինելու, մանաւաբան, տեսնում եմ՝ ապահով ձեռքերում էք, գրաւիչ մի ժպիտով շրջուելով դէպի Օննիկը, ասաց էլլադան:

Էլլադա ջան, բա ի՞նչ ենք անելու Լա Սկալայի հարցը, Մարիետան է, իմացանք որ այսօր «Զիտ, Զիտ Սան» ներկայացումն է, պիտի կարողանա՞ք տոմսակ գտնել:

Մի բան կ'անենք Մարիետա ջան: Ուրեմն դուք այս գիշեր էլ էք մնալու..., վատ չէ՛, վատ չէ՛, ես էլ կ'ուզեմ այն նման ընկերբարեկամ ունենալ..., էն էլ՝ օտար երկրում:

Ինձի համար ամէն հայ՝ բարեկամ է, սիրելի օրիորդ, ասաց Օննիկը: Ես ձեր տրամադրութեան տակ եմ, ինչ բանի որ պէտք ունենաք՝ կրնաք դիմել ինձի:

Ես կատակ արեցի պարոն, մենք այստեղ Սովետական հինգ արտիստներ ենք, եւ միասին ենք, հասկացնել տալով, որ ինքը չի կարող առանձնանալ խմբից: Իսկ ինչ վերաբերուած է օպերայի տոմսակներին՝ անկարելի է տոմսակ գտնել, բայց ես կը փորձեմ երկու ուսանողական տոմս հայթայթել, միայն ասեմ, որ ամէնավերին օթեակում կը լինի, եւ այն էլ՝ կանգնած վիճակում ներկայացումը վայելելու համար: Ուրեմն, ներկայացումից մի կէս ժամ առաջ կը մօտենաք տոմսարկղին, ձեր անունը կ'ասէք եւ տոմսերը ձեր ձեռքում կը լինեն: Երկուսիդ համար վճարելու էք, չ'զարմանաք՝ միայն չորս տոլար: Ուսանողների համար սա՛ է գինը:

Արդէն յտակ է, շարունակում է էլլադան, մենք այլեւս չենք հանդիպելու: Գիշերն էլ ուշ էք վերադառնալու Մարիետա ջան: Եւ, երեւի առաւօտեան էլ կը մեկնէք Հռոմ:

Այո, սիրելիս, եթէ դու չլինէիր՝ մենք ի՞նչ էինք անելու, անչափ երախտապարտ ենք քեզ, եւ

երբեք չենք մոռանալ այն ամէնը՝ ինչ որ դու արեցիր մեզ համար: Ընդհանուր գրկախառնութիւն եւ հրաժեշտի արցունքներ:

Էլլադային հրաժեշտ տալուց յետոյ ամբողջ օրը վայելեցինք Միլանի տեսարժան վայրերը, իսկ երեկոյեան Օննիկը ինձ ու Մարիետային տարաւ Լա Սկալա, իսկ մերոնց՝ հիւրանոց:

Առտու կանուխ կուգամ բարի ճանապարհ մաղթելու, ասել էր Օննիկը մերոնց:

Առաւօտեան երբ իջանք ներքեւ, Օննիկը սուրճ էր վայելուած բազմոցին նստած:

Հայտէ՛, հայտէ՛ շարժեցէք, նախաճաշ մեզի կը սպասէ, ասաց Օննիկը:

Կայարանում Օննիկը յիշեցրեց, Հենրիկ, կարծեմ ըսի չէ՞, որ Մարտիրոսը գալ շաբաթ ձեզի հիւր պիտի գայ, քաղաքէն չբացակայիք: Իսկ հիմա՝ բարի ճանապարհ:

Միրելի եղբայր, Օննիկ պատուական, ընդունէ մեր ընտանիքին կողմէ երախտիքի եւ գոհունակութեան զգացումները եւ գոհացիր մէկ բառով՝ Շնորհակալութիւն:

Թրջուած աչքերով վազոն բարձրացանք, իսկ կառամատոյցում կանգնած Օննիկը ճերմակ թաշկինակն էր փորձում հեռացնել աչքերից:

Ի՞նչ իմանայի, որ մէկ տարի յետոյ, 1979ին, Լոս Անջելէսում մեր ընտանիքով պիտի վայելէինք տաղանդաւոր երգչուհի էլլադա Չախոյեանի, առինքնող, չքնաղ համերգը, իսկ Օննիկին՝ պիտի հանդիպէի քսան տարի անց ու նրա հետ շաբաթներ շարունակ պիտի լուսացնէի Բոսֆորի գեղատեսիլ ափին եւ Միլանից գնած իր նաւի վրայ:



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION 626.386.8606

Հայ Քոյրերու Վարժարանի Աշակերտները Կ'ոգեկոչեն Հայոց Ցեղասպանութեան Յիշատակը



107 տարիներ անցած են հայուն դէմ գործուած ցեղասպանութենէն եւ անհատոց մնացած հայ ժողովուրդը ամէն տարի կ'ոգեկոչէ Մեծ Եղեռնի սրբադասուած նահատակներուն անմառ յիշատակը:

Այս առիթով, Հինգշաբթի, 21 Ապրիլ 2022-ին, Հայ Քոյրերու Վարժարանին մէջ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց Արհի. Միքայէլ Եպս. Մուրատեանը, Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի: Պատարագի աւարտին, վարժարանի աշակերտները ծաղիկներ տեղադրեցին դպրոցի շրջափակին մէջ գետեղուած Ծիծեռնակաբերդի մանրակերտ յուշակոթողին շուրջ: Այս արարողութեան ընթացքին աշակերտները երգեցին ,Հանգչեցէքը, գերապայծառ հայրը օրհնեց ծաղիկները եւ աղօթքով փակեց արարողութիւնը:

Իսկ Ուրբաթ, 22 Ապրիլին, վարժարանիս սրահէն ներս տեղի ունեցաւ Ապրիլեան նահատակներու յիշատակի հանդիսութիւն: Հանդիսավարն էր միջնակարգ բաժնի հայերէնի դասատու Տիկ. Մարիա Եարալեան: Բացման խօսքով ելոյթ ունեցաւ վարժարանի տնօրէն Դոկտ. Խուլիօ Թէյէզզը, ուր ան ըսաւ. «Ես հայ չեմ եւ շատ սորվելիք ունիմ Հայաստանի եւ հայոց լեզուին մասին: Ձեր նախահայրերը սպանուեցան, որովհետեւ կը պաշտպանէին իրենց հողը, իրենց տունը, որպէսզի դուք աւելի պայծառ ապագայ ունենաք», այս առիթով մաղթելով, որ օր մը ինք ալ կարենայ հայերէնով հաղորդակցիլ եւ աշակերտներէն սորվիլ լեզուն եւ պատմութիւնը:

Գեղարուեստական յայտագրով, 1-5-րդ դասարանի աշակերտները կատարեցին «Հանգչեցէք, Եղբայրներ» երգը, 6-րդ դասարանցիները՝ «Մի Խառ-

նէք Մեզ» եւ «The Armenian Genocide» բանաստեղծութիւնները, 2-րդ եւ 3-րդ դասարանի աշակերտները՝ «Տէր Զօր» ասմունք եւ «Ես Մի Հայ Պատանի» երգը:

Օրուան պատգամը փոխանցեց վարժարանի փոխտնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեանը: «Հայոց պատմութեան մէջ կայ թուական մը, որ երբեք չէք մոռնար, այն ալ 24 Ապրիլ 1915 թուականն է: Մեր նախահայրերը ջարդուեցան ամենագազանային ձեւերով եւ մենք այս էջը մեր պատմութեան միշտ կը խոստանանք չիշել՝ մնալով հայ եւ խօսելով հայերէն»: Ան նաեւ շեշտեց պահանջատէր մնալու կարեւորութիւնը, որ կարելի է մեր դատին ծառայեցնել՝ ըլլալով յաջողակ անհատեր, յաջողակ փաստաբաններ, քաղաքական գործիչներ: Տիկ. Պոյաճեան իր խօսքը աւարտեց՝ ըսելով, որ այս երկու կէտերուն կու գայ աւելնալու շատ կարեւոր կէտ մը, որն է միասնականութիւնը: «Մենք միասնական պիտի ըլլանք եւ իրար պիտի բարձրացնենք, պիտի չնախանձինք իրար յաջողութիւններէն, բոլորս միասին պիտի յաջողինք, որպէսզի մեր միակամ աշխատանքով վերադարձնենք մեր իրաւունքները»:

8-րդ դասարանը ասմունքեց «Անլուելի Զանգակատուն»էն հատ-

ուածներ եւ անգլերէնով փոխանցեց աշակերտութեան խօսքը: 4-րդ դասարանը ներկայացուց Ուիլիըմ Մարոյեանի «Կ'ուզեմ Տեսնել»ը, որուն սպաներէնը ներկայացուցին 5-րդ դասարանցիները: Ապա, երկու դասարանները միասնաբար երգեցին «Քաղցրիկ Հայաստան» երգը, իսկ 7-րդ դա-

ծնողները ձեզ ուղարկած են հայկական վարժարան եւ դուք ալ երբ մեծնաք, իրենց օրինակով, ձեր գաւակները ուղարկեցէք հայկական վարժարան»:

Փակման խօսքով, գերապայծառ Միքայէլ Եպս. Մուրատեան ընդգծեց, որ պէտք է մեր հայութեամբ հպարտ ըլլանք, որովհետեւ



արանը ասմունքեց «Մենք» բանաստեղծութիւնը: Անուհետեւ, Ա. դասարանի աշակերտները ներկայացուցին «Իմ Քաղցրանուն» ասմունքը, եւ մանկապարտէզի աշակերտներուն հետ երգեցին «Հայրդիք» երգը:

Վարժարանիս մեծաւորուհի Քոյր Լուիզա Գասարճեան խօսք առնելով՝ ըսաւ, որ Հայ Քոյրերու վարժարանը եւ այլ հայկական վարժարաններ աշակերտներուն հայերէն կը սորվեցնեն, բայց եթէ ծնողները իրենց գաւակներուն հետ հայերէն չխօսին, դպրոցին աշխատանքը ի դերեւ կ'ելլէ: «Պէտք չէ գայ օր, որ ըսենք՝ իմ ծնողքս հայ էր: Հայ մնալու համար պէտք է հայերէն խօսինք, հայերէն երգ լսենք ու պարենք, հայկական ճաշեր ուտենք, եւ հայ եկեղեցի յաճախենք: Հայ ժողովուրդը նախընտրեց զոհուիլ, քան իր հաւատքը ուրանալ»: Քոյր Լուիզան իր խօսքը աւարտեց՝ պատգամելով. «Մի՛ մոռնաք որ հայ էք, շնորհակալ եղէք, որ ձեր

տեւ ամենահին ազգերէն մէկն ենք, եղած ենք այն առաջին երկիրներէն, որ իր թագաւորական պետութիւնը ունեցած է, եղած ենք առաջիններէն, որ իր սեփական գիրն ու գրականութիւնը ունեցած է, առաջին քրոստոնեայ ազգն ենք: Ան ըսաւ. «Այս բոլորը պատմութիւն են, եւ պատմութիւնը ժողովուրդը կը գրէ: Հայոց պատմութիւնը դուք պիտի գրէք. եթէ դուք չապրիք ձեր հայութիւնը, դուք պիտի չկրնաք հայոց պատմութիւնը շարունակել: Այդ պատճառով, հաւատարիմ պէտք է մնանք մեր նախահայրերուն պատգամին՝ կառնած մնալ մեր քրիստոնէական հաւատքին ու ազգային պատկանելիութեան: Այդպէս է որ չենք մոռնար մեր նահատակները եւ կը պահանջենք մեր իրաւունքները»:

Ոգեկոչումը աւարտեցաւ խմբային աղօթելով «Հայր Մեր»ը:

Թղթակցութիւն Դպրոցէն


Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերօրին

Massis2@earthlink.net
(626) 797-7680

MAY 8★2022

ARMENIAN TRADE SHOW

Los Angeles, St. Leon Cathedral 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 9150, USA



When tomorrow starts without me,
Don't think we're far apart,
For every time you think of me,
I'm right here
In your heart.

Remembrance on the 40th In Loving Memory Of **Sera**

May 1, 2022
St. Gregory Armenian Church
2215 E Colorado Blvd
Pasadena, CA 91107

“Hishadagi Hokejash” at
AGBU Boyajian Hall
2495 E Mountain St
Pasadena, CA 91104

Հայապահպանունը Ազգային Դաստիարակութեան Պարունակին Սեջէն

Շարունակուած էջ 8-էն

սփիւռ. քեան օրակարգ եւ պարտաւորութիւն չէ: Հայապահպանումը այժմէական եւ կարեւոր է Հայաստանի ու Արցախի համար: Հայերէն սորվելն ու խօսիլը կարեւոր են, բայց բաւարար չեն: Հայը պիտի սորվի իր ազգային արժէքները եւ պիտի պահէ ու կերտէ գանձը: Հայրենի իրականութեան համար այս պիտի նշանակէ Հայաստանի եւ Արցախի պետականաշինութիւն՝ քաղաքացիական, ընկերային, ազգային եւ բարոյական արժեքափերով: Պետութիւն կը շինուի, երբ կայ գիտակցութիւնը ազգային, քաղաքացիական եւ բարոյական արժեքափերու: Այս բոլորը կարելի կ'ըլլայ իրականացնել, երբ կայ համապատասխան դաստիարակութիւնը:

ին եւ քաղաքացիական ամուր արժեքափերը տնօրինեն մեր հաւաքական կեանքին: Սխալած պիտի չըլլանք, երբ ըսենք, որ շատ յաջողութիւններ ըստանալուցինք մեր անկախ պետութիւնը զարգացնելու մարտահրաւէրին մէջ: Պետութիւն հասկացողութիւնը եթէ մէկ կողմէ պիտի ընդգրկէ կառավարական վարչամեքենան, բայց նոյնքան նաեւ՝ երկիրը եւ իր հաւաքական, ընկերային կեանքերն ու կառուցները: Հաւաքական կեանքը, ուր ազգային եւ մշակութային արժէքները սակարկելի չեն երբեք: Բարոյական եւ կենցաղային կեանքի գիտակցութիւնը, ուր հայը պիտի սորվի գանազանել ճիշդը սխալէն, վատը լաւէն, բարին չարէն: Պիտի սորվի, թէ կաշառակերութիւնը մեղք է, եւ որ երկիր կը

Մեր նախահայրերը, որոնք անցան Յեղասպանութեան դժոխքին մէջէն, չբաւարարուեցան միայն ապրելով: Անոնք հաւատացին, որ իրենց այդ դժոխային կեանքի մէջէն պիտի վերապրին եւ վերապրեցնեն հայը: Անոնք հաւատացին հայապահպանումի տեսլականին: Այդ ընելու համար հաւատացին ազգային դաստիարակութեան անհրաժեշտութեան: Արժէ այսօր փորձ մը ընել եւ

թիւններուն եւ նեղութիւններուն մէջէն պիտի տեսնենք, թէ հայուն պատմութեան շարունակականութիւնը իր ազգային եւ քաղաքացիական դաստիարակութեան մէջ է: Դաստիարակութիւն մը, որ հայուն ազգային եւ քրիստոնէական կեանքի արժէքները պիտի կերտէ եւ շինէ: Արժէքներ, որոնք չեն սակարկուիր: Արժէքներ, որոնք պատմութիւնը կը կերտեն եւ կը զարգացնեն:



համեմատել ներկայ հայկական իրականութիւնը՝ հայրենի եւ սփիւռ. քեան իր բոլոր ճգնաժամերով ու մարտահրաւէրներով, Յեղասպանութեան եւ տարագիր մեր նախահայրերու ապրած դժուարին օրերուն հետ: Եթէ մեր ներկայի օրերը ունին իրենց իւրաքանչիւրութիւնները, բայց արժէ հարց տալ. «Արդեօք հայուն ապրած Յեղասպանութիւնը աւելի նուա՞գ տազնապալի էր, քան այն, որ մենք այսօր կ'ապրինք»:

«Ես հայ եմ»:
«Ես քրիստոնէայ եմ»:
Հայ փոքրիկները եւ պատանիները կը հաւատան այս արժէքին:

Ես ասիկա ոչ միայն լսեցի իրենցմէ, այլ նաեւ տեսայ: Տեսայ իրենց մատղաշ հոգիները եւ հայօրէն տրոփող սրտերը: Այս մատղաշ հոգիները եւ տրոփող հայու սրտերը պէտք է որ կերտենք եւ շինենք: Իսկ կերտելու եւ շինելու համար պէտք է հաւատանք դաստիարակութեան: Հայապահպանումի դաստիարակութիւնը՝ իր ազգային եւ քաղաքացիական պարունակներուն մէջէն:

Հայը տոկաց Յեղասպանութենէն ետք: Ան ոչ միայն տոկաց, այլ կերտեց ու շինեց հայը եւ հաւատաց հայապահպանումի առաքելութեան: Այս կրցաւ ընել, քանի որ կառուցեց ազգային դաստիարակութեան, որ ապահովեց հայուն պատմութեան շարունակականութիւնը: Հայը այսօր ալ պարտի ընել նոյնը: Մեր շատ մը դժուարու-

Հայապահպանումը՝ Հայաստան, Արցախ եւ սփիւռ. ք: Այս հայապահպանումը եւ անոր դաստիարակութիւնն է, որ հայուն կեանքի պատմութեան շարունակականութիւնը պիտի ապահովեն:



Հայաստանի եւ Արցախի անկախացումէն ասդին՝ որ քանո՞վ կրցանք պետութիւն հիմնել: Անկախ ու անկախացած պետութիւն ունենալը լաւ է եւ անհրաժեշտութիւն՝ ազգի մը գոյատեւումին համար, բայց այդ բաւարար չէ: Ազգը եւ երկիրը գոյատեւելով չէ, որ կ'ապրի: Անհրաժեշտ է երկիրը, պետութիւնը եւ պետականութիւնը զարգացնել այնպէս, որ հոն ազգա-

քանդէ, թէ կեանքի նկարագիրը պէտք է կերտել քրիստոնէական արժեքափերու վրայ, եւ որուն մէջէն կը շինուին հաւաքականութիւն եւ պետութիւն: Պետականաշինութիւնը այս իմաստով պիտի ընդգրկէ կերտել երկիր՝ իր հաւաքականութեամբ: Երկիր եւ հաւաքականութիւն կերտելու համար պէտք ունինք ազգային եւ քաղաքացիական դաստիարակութեան:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈԳԻ ՇԱՄԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

«Պարսելոնան» Պարտուեցաւ, «Ռեալը» Ապահովեց Տիտղոսը



Սպանիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանէն յետոյ տեղափոխուած խաղին «Պարսելոնան» ընդունեց «Ռախօ Վալիեկանոյին»: Չաւիի գլխաւորած խումբը պարտութիւն կրեց նուազագոյն արդիւնքով:

7-րդ վայրկեանին սպանացի կիսապաշտպան Ալվարօ Գարսիայի խփած կոլը դարձաւ յաղթական:

Ընթացիկ առաջնութեան առաջին շրջանին եւս «Ռախօ Վալիեկանոն» քաթալոնական խումբին յաղթած էր նուազագոյն արդիւնքով:

Այս արդիւնքին շնորհիւ Մատրիտի «Ռեալը» առաջնութեան աւարտէն 5 հանգրուան առաջ գործնականին մէջ ապահովեց ախոյեանի տիտղոսը: Արքայական ակումբը 78 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը ընթացող «Պարսելոնան» ետ է 15 կէտ: Երրորդ տեղը գտնուող «Սելիւիան» նոյնպէս ունի 63 կէտ:

«Պայրըն» 32-րդ Անգամ Նուաճեց Գերմանիոյ Ախոյեանի Տիտղոսը



Միւնխի «Պայրընը» 32-րդ անգամ եւ 10-րդ անգամ յաջորդաբար նուաճեց Գերմանիոյ ախոյեանի տիտղոսը:

Պունտսելիկայի 31-րդ հանգրուանին «Պայրըն» ընդունեց Տորսմունդի «Պորուսիային» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Առաջնութեան աւարտէն 3 հանգրուան մնացած «Պայրըն» վաստակած է 75 կէտ: Երկրորդ տեղը գտնուող «Պորուսիան» ետ է 12 կէտ:

ՊՍԺ-ն 10-րդ Անգամ Հռչակուեցաւ Ֆրանսայի Ախոյեան

ՊՍԺ-ն 10-րդ անգամ նուաճեց Ֆրանսայի ախոյեանի տիտղոսը:

34-րդ հանգրուանին ընդունելով «Լանսին» ՊՍԺ հաւասար 1:1 արդիւնքով աւարտեց խաղը:

ՊՍԺ-ն 78 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 16 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Մարսելէն», որ մեկ հանդիպում պակաս կատարած է: Առաջնութեան աւարտին մնացած է 4 հանգրուան:

Թայսըն Ֆիւրին Պաշտպանեց Տիտղոսը Եւ Աւարտեց Ասպարէզը

Արհեստավարժ բռնցքամարտի գերծանր կշիռի WBC վարկածով աշխարհի ախոյեան, 33-ամեայ Թայսըն Ֆիւրին յաջողութեամբ պաշտպանեց տիտղոսը:

Բրիտանացի մարզիկը նոքաուտով յաղթեց բրիտանացի Տիւիան Ուայթին: Մենամարտը դադարեցուեցաւ 6-րդ ռաունտում:

Թայսըն Ֆիւրին 33 մենամարտէն 32-ր աւարտած է յաղթանակով եւ որոշած է հեռանալ արհեստավարժ բռնցքամարտի իր ասպարէզէն:



Ազգերու Լիկա. Հայաստանի Հաւաքականի Հանդիպումներու Ցանկը

ՈւեֆԱ-ն հաստատած է Ազգերու Լիկայի խմբային փուլի Հայաստանի ազգային հաւաքականի հանդիպումներու խաղացանկը:



- Յունիսի 4
- Հայաստան - Իռլանտա
- Յունիսի 8
- Սկովտիա - Հայաստան
- Յունիսի 11
- Ուքրանիա - Հայաստան
- Յունիսի 14
- Հայաստան - Սկովտիա
- Սեպտեմբերի 24
- Հայաստան - Ուքրանիա
- Սեպտեմբերի 27
- Իռլանտա - Հայաստան

«Լիվերփուլ» Եւ «Չելսի» Յաղթական

Անգլիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց «Էվերթոնին»:

2:0 արդիւնքով առաւելութեան հասաւ գերմանացի Եուրգեն Կլոպի գլխաւորած խումբը:

62-րդ վայրկեանին եգիպտացի յարձակող Մոհամէտ Սալահի փոխանցումէն յետոյ հաշիւը բացաւ շոտլանդացի պաշտպան Էնտրիու Ռոպերթսընը:

85-րդ վայրկեանին դաշտի տէրերու առաւելութիւնը կրկնապատկեց պէլճիգացի յարձակող Տիմոթի Օրիգին, որուն կոլային փոխանցում կատարեց քրուեմպիացի յարձակող Լուիս Տիասը:

33 խաղէն յետոյ «Լիվերփուլ» 79 կէտով երկրորդն է եւ 1 կէտ ետ է առաջատար «Մանչեսթեր Սիթիէն»: «Չելսին» պարտութեան մատնեց «Ուեստ Հեմին» շնորհիւ ամերիկացի կիսապաշտպան Կրիստիան Պուլիշչիչի 90-րդ վայրկեանին նշանակած կոլին:

32 խաղէն յետոյ «Չելսին» 65 կէտով երրորդն է:

«Միլանը» Հռոմի Սեջ Յաղթեց «Լացիոյին». «Ինթեր» Ուժեղ Եր «Ռոմայէն»

Իտալիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին «Լացիոն» Հռոմի մէջ ընդունեց «Միլանին» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

Չորրորդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ դաշտի տէրերու իտալացի յարձակող Չիրօ Իմպլիչին: Հիւրերը պատասխանեցին 50-րդ վայրկեանին ֆրանսացի յարձակող Օլիվիէ ժիրուի կոլով: «Միլանի» յաղթական կոլը յաւելեալ ժամանակի ընթացքին նշանակեց իտալացի կիսապաշտպան Մանրօ Տոնալին:

«Միլանը» 74 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը, երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Ինտերն» ունի 72 կէտ եւ 1 հանդիպում նուազ կատարած է:

Ախոյեան «Ինտերը» Միլանի մէջ հիւրընկալեց «Ռոմային» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր: Ան 85-րդ վայրկեանին նշանակեց «Ռոմայի» միակ կոլը:

Առաջին շրջանում եւս «Ինտերը» յաղթել էր «Ռոմային»՝ 3:0: «Ինտերը» (33 խաղ) 72 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղ նահանջած «Միլանից» (33 խաղ): «Ռոման» (34 խաղ) 5-րդն է՝ 58 կէտ:

«Ռոման» Հաստատած Է, Որ Մտադիր Է Նոր Պայմանագիր Առաջարկել Մխիթարեանին

Իտալական «Ռոմա-յի» գլխաւոր տնօրէն Տիալօ Պիմտուն հաստատած է, որ հռոմէական ակումբը մտադիր է նոր պայմանագիր առաջարկել Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին:

«Չեմ կարծեր, որ ինդիւններ կը յառաջանան Հենրիխ Մխիթարեանի պայմանագրի երկարաձգման հարցով: Երկու կողմերն ալ մտադիր են շարունակել համագործակցութիւնը», - ըսած է Տիալօ Պիմտունի:

33-ամեայ ֆուլթալիստը 2019-ին տեղափոխուած էր «Ռոմա», որուն հետ անոր գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ այս տարուայ Յուլիսի 1-ը:

Մխիթարեանի տեղափոխման արժէքը այժմ կը գնահատուի 10 միլիոն եւրօ:

